Hon. Rédaction
de la Revue Arménienne HANTESS
au Couvent des R.R. P.P. Méchitharistes
à VIENNE
VII Méchitharistingasse

ՀԱՍԿ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

27 ՐԴ ՏԱՐԻ

1897

ԹԻՒ 13 ՅՈՒԼԻՍ 1

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՉՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԽԻՂՃ 441
ԱՆԵՐԵԻՈՅԹ ՊԱՐՈՆԸ 444
ՉԱՅՆԻ ԵՒ ԻՐ ԱՃՑՈՒԹԵԱՆ ՈՋԴՆՑՈՒԹԻՒՆԸ (Տօքթ. Կ. Յ. Փաշաեան) 449
ԶԻՆԱՍՏԱՆ (Լօրիս Գ. Մելիքեան) 453
ՅՈՒՏԱԿ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԱՅ (Տ. Վ. Պ.) 457
ՅՕՂՆ Ի ՎԱՐԴԻՆ (Ե. Տ Եղիազարեան) 462
ՀԱՒԼՊԻ ՎՐԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԸ (Յ. Պ. Թիւրապեան) 463
ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՍՐՏԱՁՈՐԻ ՄԷՋ (Յ. Ծիրճիկեան) . . . 467
ՈՒՏՆԻՆ ԴՈՐԾԵՐ (Սիամանթօ) 468
ԱՅԼ ԵՒ ԱՅԼ 472

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ Ա. ՄԱՄԼՈՅ

ԱՅՆԹԱՊ Յ. Ծ. . . Ձեզ ղրկուածի Ձեր Ա. Մայիս թուակիրն ստացած եմ, կրնամ ապահովել զձեզ թէ ձեր պահանջած գործը պիտի կատարուի եւ ձեր ուզած ձեւով պիտի ղրկուի։ Ձեր ուզած գործին համար ամենէն աժան գինը 43 ռուբլի է, որուն մէջ ներառեալ են նաեւ թարգմանութեան վարձքը եւ տպագրութեան ծախքերը։ Ուրեմն, եթէ այս գինը ձեզի համար չափազանց մեծ չէ, կրնանք գործին սկսիլ։ Ձեր հրամանին սպասելով կը մնամ։

ԵՐԻՋԱ Ս. Ա. . . Ձեր ՝ի Մայիս ղրկակիրն իր պարունակածովն ստացած եմ եւ անոնց ընդունելութեան։

ԼՕՏԻՄԻՇ Տ. Պ. . . Ձեր վերջին նամակին ստացումիդ Պ. Մ. . .ը տեսաւ մեզ։ Հ. Ս. . . նորէն պիտի ստանայ ձեռագրերէ մը, այսպէս խօսացան։ Ձեր գրած Ս. գրքերը պետուռն մի՛ ինչ ուշանան։

ՀԱՒԼՊ Կ. Պ. Թ. . . Ձեր բոլոր նամակներն ժամանակին ստացած եմ։ Գրեածց ծրարն ալ ինչպէս նաեւ Ս. Մարմոյ թիւերն Ձեր ցանկացած հասցէին, կ՚ապահովիմ պատասխանիս։

ՀԱՒԼՊ Յ. Պ. Ն. . . Գրեածց ծրարն ալ անշուշտ ստացած էք։

ՆԻԳՈՍԻԱ Վ. Բ. . . Կ՚հաստատեմ ձեր 7/19 Մայիս թուակիր նամակն։

ՎԱՌՆԱ Ս. Ե. . . Կ՚հաստատեմ ձեր 17/29 Մայիս թուակիրն։

Ս. ՍԻՎՐԻՍԱՐԵԱՆ ԵՒ ԸՆԿՔ

ՄԵԾ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Այն հաւաքաւորը վաճառատունն՝ ուր կը ծախուին զանազան բամպակեղէն, բրդեղէն, վերարկեղէն նիւթեր, վաղուց կը վայելէ ոչ միայն իշմիրի ամեն հասարակութեանց համարումն, այլ և իր բոլոր գաւառային յաճախորդներուն վստահութիւնը որ արդէն քանի հատած են իր ապրանաց ընտրութեան, ուժգնութեան լաւութեան, չափերու ճշտութեան և գիներու անհամեմատ չափաւորութեան զգալի առաւելութիւններն, այնպէս որ միշտ դոհ մնացած և այն վաճառատունը պատուած են իրենց յանձնարարութեամբ ինչպես ցարդ նոյնպէս և այսուհետև. Սիվրիսարեան վաճառատունն պատրաստ է միևնոյն դիւրութիւններն ընծայել տեղւոյս յաճախորդներուն, և յատկապէս գաւառայնոց ուշադրութիւնը կը հրաւիրէ վերոյիշեալ առաւելութեանց վրայ։ Պարտին վստահ լինիլ թէ իրենց յանձնարարութիւններն գրավ կամ գործակատարներու միջնորդութեամբ, ամենայն ճշտութեամբ ու փութով պիտի կատարուին։ Ընտարակոյս գաւառացի և տեղացի նոր յաճախորդներ պիտի վաստան, անձամբ դիմելով փորձել, ապրանաց գերազանցութիւն, Սիվրիսարեան ընդարձակ մթերանոցներու մէջ՝ որ կը գտնուին՝

Այն – Եօրկի կաշեակի ֆողոքեն տեր վեզիր խանի ոպին։ 13—24

ՉՐԻ ԴԱՍԱԼՈՕՍՈՒԹԻՒՆՔ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

ՄԵՍՐՈՊԵԱՆ-ԳՐԱՍՏՐԱՑ ԸՆԴԵՐՈՒԹԻՒՆ

Անուս պատանիներու դասախօսութիւնք կը լինին՝ Հայերէն, Անգլիերէն, Ֆրանսերէն և Թուրք լեզուներով, ինչպէս նաև թուաբանութեան և այլն. Շարաթը երեք անգամ ներկայ առաւօտ ժամը 10 — 11 ½, երեքշաբթի և հինգշաբթի երեկոյները ժամը 7 ½ — 9։

Աշակերտայ թիւն հասայ է այսօր մինչև 88։ Արդ ամէն այն անուս պատանիները, որոնք չուզայի մէջ գործով կամ արուեստով մը կ'զբաղին, թող փութան օգտուիլ այս առթէն, երբ ամէն ինչ ձրի կը տրուի իրենց — դասախօսութիւնք, գիրք, թուղթ, եւ։ 4—24

ՄԵԾ ԴԵՐՁԱԿԱՏՈՒՆ

ԳԷՈՐԳ Մ. ՔԷՇԻՇԵԱՆ

Ա.պակնվաճառանոց եւ ոսկեղէն ֆէրէճէներէն ետք, թիւ 1

Վաճառատունս հաստատուած օրէն իվեր առ ժամանակին մէջ ունեցած բազմաթիւ յաճախորդներու, ապագայ ալ են իմ. մենք մեր յարատարութեան հաւատարիմ գտնուած ենք, հարկ չկայ գովեստներ շռայլել. յայտ, մեր գործերը իսկայն են արդէն իմ գներու ժամանութեան հետ նաև ունինք մեծ առաւելութիւն մը ուրիշ նմանօրինակ հաստատութիւններէ ձեւի, կարի և ապրանքի մասին։ Կրնայնեցէք թէ որչափ դժուարին է ամեն մէկ անհատի ճաշակը գոհացնել և ձեւին յարմարութիւն տալ, նա մանաւանդ երբ այդ անձը առաջին անգամ է որ հագուստ չինել կուգայ մեզ։ Ուստի ինչպէս մինչև այսօր, նոյնպէս ալ այսուհետև ալիսի աշխատինք ամեն ջանք և զոհողութիւն չի խնայել նոյն իսկ ամենէ բծախնդիրներն անգամ գոհացընել։

Աւելորդ չենք համարիր նաև յիշացնել իմ վաճառատանս մէջ կր գտնուի քաղմիրներու, փալտոններու և այլ տեսակ առուելէններու ճոխ հաւաքածոյ մի, և իմ պատրաստ կարուած հագուստներ ալ ունինք։

Ձմեռ, ձեռնարկ եւ տոկուն, դիմեցեք եւ տեսէք։

2—24

ԸՆՏԻՐ ՔՈՆԻԱՔ

Διευθυντὴς Αντρικίδης καὶ Σας

ԱԱՄՈՍԻ ՄԻՍԻՔԻՔ ԽԱՂՈՂԻՆ

Ինչպէս ծանօթ է ամենուն Սամսոի միսքէթ պիտին ազգասէր վրայ կը ծերպագործէ միւս բոլոր իր նմանները, հետեւապէս այդ խոպոպէն չհետաձ ՔՈՆԻԱՔԻՆ ճշտութէն համոզուածութեան բիմիական նպատակ մը պահանջմանց, ոչ թէ միայն կրնայ մրցիլ Յունաստանի մէջ և այլուր, պատրաստ ածներն թէ պնդին և թէ նեռակին կողմէ, այլ նաև կրնայ առաջինն համարուիլ Եւրոպայի մէջ պատրաստած բոլոր քօնիաքներէն։

Սամսոի մէջ հիմնուած առաջին միակ հաստատութիւնն է այս գործարանն ուր չհետաձ ՔՕՆԻԱՔԻՆ առաջինն է ըստ Միսքէթի խոպոպէ։

Հետեւապէս այս քօնիաքն իր գերազանցութեամբ արդէն հաչակ հանած լինելով, վստահ ենք որ Աբդուլ Հայ հաստատութիւնն, անգամ մը մէջտեղով պիտի գնահատուի անոր գերազանցութիւնն և պիտի դադրի ուրիշ քօնիաքներ գործածելէ, ուստի որ մեր ՔՕՆԻԱՔԻ տեսակին մի է և չունի երկրորդական կամ երրորդական տեսակներ։

ԱԱՄՈՍԻ ՔՕՆԻԱՔՆ մեծ քանակութեամբ տնեցող վաճառատուն գտնուի Կիրիաքեան թիւ 48, Կ. Պոլիս, Գ. Մանուկեանի և Ընկերք։ իսկ մանրածախ գնողներն կրնան գտնել Շերպէտճիներու մէջ թիւ 101 Յովհէփ Էսկիէզեանի, և Հայոց թաղ Պրնք. Գ. և Լ. Շէրպետճեանի, ինչպէս նաև Շերէճիներու մէջ Մեծ. Գէորգ Քէշիշեանի և բոլոր չափորակածուներու մօտ։

Գիներն անհամեմատ աժան են մրցելու կարող հրապարակս վրայ գտնուած բոլոր քօնիաքներու հետ։

Կ. ՅԱՎԼԻ Գ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Միակ ներկայացուցիչք

Թուրքիոյ եղիպտոսի, Ամերիկայ և Միացեալ Նահանգաց։

Յ. Գ. Ամէն անձ որ կը փափաքի ձեռնհասակեալ երկրներու ապրանքներ ձեռք հանելու հատուածել Սամսոյ Պէնեաէ գործակալութեան, կրնայ գրել Ազգանունով Ընդհ. Գործակալութեան ներքոհասցէին, Կիրիաքեան. թիւ 48։

ԿՈՒԶԻՔ

Աժան, մաքուր և յաջողած լուսանկարներ առնելու, պիտիցկը ի Հալէպի վաղց

ՄԱՐԱԹՕՆ

Լուսանկարչատունն, ուր՝ բնական մեծամիտներն ալեսալ մի՛ չեն մանրապիտական փոքրութիւնովը պատկերներէ զատ, խիստ շամփուր պիներով կը չինուի նաև հանդիսական, պրօսական, ընտանեկան, մանրմասկան, հարսանեկան և այլ կանոնական կարգի խմբանկարներ։ Փորձառուներէ պարս եղած յանձնարարութիւնք ևս աւելորդ է ըսել՝ որ փութով և գոհացուցիչ պայմաններով կը կատարուին։

Մրցակից անկարելի է մեզ գէմ, քանի որ լուսանկարչական արուեստին երեք կարևոր կէտերուն, այն է՝ ըբռուշն, ֆոկն և օբէրտէյճն մէջ մեր ունեցած մասնագիտութիւնն հարկ չի մղեր պարզամիտները խաբելու հաժար ձրի և չնացուցիչ արգուզարդերու գիմել, ինչ որ շատեր ի կիր կ՝առնուն իրենց արուեստական թերութիւնները պարտկելու հաժար։

Տեր եւ վարիչ Մարթաօն լուսանկարչատան

Դ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ,

Ի Հալէպի փողց. — Զմիւռնիա

ՄԵԾ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒԹ

Հայոց գէտ ըլաղ

Դ. ԵՒ Լ. ՃԷՐԻՏՃԵԱՆ

Ցարիւ ունինք ծանուցանել Արդյ Հասարակութեան և մասնաւորապէս մեր պատ. Յաճախորդներուն թէ վերջերս մեր վաճառատունը խիստ ճոխացուցած ենք պանդրան ուտեստներով։

Մեզ գիմողը ամէն ինչ պիտի գտնէ շատ աժան գիներով։

Ունինք նաև Արիւերի և ուրիշներու ընտիր օճառներ, նոյն գործատուններէն ծախուած գիներու վրայ ԱՒԱՆՑ ամենափոքր չափազանցութիւն մը ընելու։

Գիւրութեան համար մեր յաճախորդներուն հաշուետեարներ կը յանձնենք և մեր սովորութեան համաձայն հաշիւները ամիսը անգամ մը կը փակենք։

ՌՒՀԱՄԵՄԱՏ ԱԺՆՈՒԹԻՒՆ, 11—24

ԹԻՒ 13 1 ՅՈՒԼԻՍ 1893

ԽՈՂՃ

Իմաստասիրութիւնն, որու սահմանը տակաւին ճըշտած չեն հին ու նոր փիլիսոփաները, մեզ կ'ուսանի փառմանքի կարգ մը կանոններ ու հրահանգներ իրեւ տիեզերական ճշմարտութիւնի յայտարար կանոններու. Այս կանոններուն ոճն ու ձեւը կ'փոխուի ըստ ոսկեդարին ազին և ուղղութիւնը նոյնն են և մի և նոյն կնճիռները ու հանելուկները կ'պարունակեն.

Առնենք բնական ըստ+ ըսուած կանոն, որ բան իմաստասիրական դիտութիւնի մի կարևոր ճիւղը կ'կազմէ, ինչ կ'գանենք անոր մէջ — այս յատկանական յայտարար թիւնը թէ աղատ կամքն ու բանականութիւնը կը պատուի նեն մեզ դործելէ բարին և խոչընդոտ չարէն, թէ բարւոյն ու չարին դատաւորը խղճմն է, նեղքին դատակ-

յուԹիւնն է՝ որ կ՚ստգնապի երբ մարդ արդարուԹեան ճամբէն կ՚մոլորի և իր գործերն չահու, հաճոյքի, կրից դրդմամբ կ՚կատարէ։ Հետևապես մարդկային բոլոր պարտաւորուԹեանց վորձաքարը խիղճն է, խիղճն է ուրեմն որ մեզ պիտի առաջնորդէ դէպի բարին, որ միակ բարոյական գերագոյն չարժառիթը պարտի լինիլ մարդկային ամեն գործառնուԹեանց։

Սակայն՝ իրօք մարդկային ամեն չարժուձևերուն դրդիռն բարւոյն ղգացմունք է, միԹէ իրօք այդ չարժումներուն դատաւորը խիղճն է։ Ահա խնդիր մ՚որ ցարգ բոլոր իմաստասէր աշխարհի խորհրդածուԹեանց առարկայ է եղած և բանաւոր լուծում մը չէ գտած։ Տեսապես ստոյգ է որ մարդկային բարոյական կատարելուԹիւնն իր բարոյական պարտուց կատարման մէջ պարտ է փնտռել, սակայն գործնապես ինչ ահագին տարբերուԹիւններ կ՚տեսնուին այդ բարձր վարդապետուԹեան և իրողուԹեանց մէջ։

Եւ ուսկի՞ց կ՚ծագին այս խորուԹիւնները—այն պարզ իրողուԹենէ որ բարոյական օրէնք, գիտակցուԹիւն, պարտաւորուԹիւն ևն բնաւոր կամ երկնատուր կտակները չեն, այլ՝ ամեն ղգացմունքներու և դաղափարներու պէս՝ միջավայրի սովորուԹեանց, բարուց և յարաբերուԹեանց արդիւնք։ Այդ օրէնքն իր բարեշրջուԹիւնն ունի, և մարդկային մտայ և յարաբերուԹեանց զարդացման բերմամբ կ՚կատարելագործի։ Հետևապես պէնէրոնի քաղաքագրուԹիւն մը չէ կարող ունենալ այն, որ տեղւոյ և ընկերային վիճակի մը համեմատ այլազան ձև և խնամս կ՚ընդունի։ Այդպէնիին խիղճը չէ ինչ որ է Թերակիրթ մարդուն խիղճն, և քաղաքակիրթ էակի մը խիղճը չէ ինչ որ կրնայ լինիլ ճշմարիտ մարդասիրի մը խիղճն։ Մին՝ լոկ չափն իր անմասնական յօժարուԹիւններն են, որով կ՚կատարէ ու կ՚չարդէ ինչ որ Թերակիրթ մարդուն իսկ սոսկում կ՚պատճառէ, միւսին խղճի ուղեցոյցն իր հաճոյքն ևս չահն է, որով վայրագաբար առաքինի կ՚կոխէ ի՛նչ որ սուրբ, նուիրական կ՚նկատուի քաղաքակիրթ

մարդուն, ուրիշի մը խղճին առաջնորդն իրը թէ հանրայինն բարւոյն զգացումն է, որով կ'զինուի այն ամեն կրօնական, քաղաքական հիմնարկութեանց դէմ զոր հասարակաց բարօրութեան վնասակար կ'համարի, թէև իրօք մարդկային ամենէ կենսական իրաւանց հակառակ ընթացքի մը մէջ կ'գտնուի, անգէտ։ Ա.յսպէս մարդկային սիրտն որքան բաժանում նոյնքան խիղճ ունի կարծես, և այդ խիղճը քան վայրենւոյն, քան բարբարոսինն աւելի ահարկու աւելի դժնդակ կերպարան մը կ'առնու երբ դիտութեան, իմաստասիրութեան և քաղաքակրթութեան չպարով ղարդարուած կ'քալէրէ ինչ որ տարրական բարոյականութիւն մը հրէշային գործերու կարգը կ'դասէ։

Ուրեմն մարդկային ազգը չէ հասած այն աստիճան բարդաւաճման ուր կարելի լինի ըսել թէ կայ համազգային խիղճ, արդարութեան ընդհանուր աճապարդ տաւոր մ'որ կ'վարէ մարդկային գործերը դէպ ի բարին, դէպ ի արդարն և ճշմարիտն, և երբ մեզ պէս ողորմելի ժողովուրդ մը՝ վիճանակ իր առանին, ընտանեկան ու տոհմային առաքինութիւնները մշակելու լռելյայն, կ'երթէ կ'նետուի այն հողմալից մրրկին մէջ՝ ուր տակաւին հանրային շահեր և իրաւունքներ պայմանադրական բարոյականի մը կ'զոհուին, ծայրագոյն յիմարութեան գործ մը կ'կատարէ, և իր անձուկ շրջանին մէջ վայելելիք բարիքն ևս երևակայական բարոյականութեան մը խարուսիկ նկատողութեանց մէջ կ'ընկղմէ։

ԱՆԵՐԵՒՈՅԹ ՊԱՐՈՆԸ*

ԳԼՈՒԽ ՅԳ.

ՎՏԱՆԳԱԼԻ ՎԻՃԱԿ ՄԸ

Թէև Պէնդհըմ մտադիր էր մատնել թէ Տօք. Ռոմբոմայրի եւ թէ Օր. Օլիվի վտանգութիւնը, սակայն կ'մտածէր որ այդ ընթացքն իր դժուարութիւններն ունէր, ինչպէս որ կ'զուշակէր, իր վիճակն հասուն նկատողութեան առնելով։ Մինչեւ հիմակ այս պարծողութենէ քաշնհինգ տարի շահեր էր իրաւ, բայց Ամրիան Լանգսդրի նշանածէն աւելի տակ չափաւ ընդունէր մինչեւ որ առնը բոլորովին վերէն վար չխուզարկուէր եւ այն անարդ մարդն երեան չելնէր։ Եթէ, ինչպէս որ Պ. Ինճուալ գուշակեր էր, Ամրիան գալտնի սնեակի մը մէջ գտնուէր, անտարակոյս Օր. Օլիվ Մընտրոսէն պիտի ձեռք ձգէր վարձատրութեան մը ձայնած ատը, բայց միւս կողմէ բան մը չպիտի առանար իր արդոյժէն, քանի որ տեղեկացել պիտի լինէր խնդիրն անոր բացատրելէդ պայմաններ դնելէ։

— Եթէ իմ ծերուկս տպանած է Պ. Լանգսդրը — կըսէր մտածէն Տէնդհըմ երբ դէպ էիր առունը կ'գառնար — իսկոյն գաթի պիտի ձեռքտակեն եւ այն ժամանակ չպիտի կրնամ առնար ուշիզ ճամրան ցոյց տալ եւ իրմէ գրամ կորզել, բայց միւս կողմէ՝ առնէն հեռու պիտի գտնուի եթէ բան մ'երեւան հանեն, եւ այն ժամանակ կարելի պիտի լինի ինձ իսկոյն հեռագրել իմ ծերուկ ոխերջս ի Մարլօ եւ անոր հետ ժամադիր լինիլ քաղաքս ... այնպէս որ եթէ մի անգամ անոր օձիքը ձեռք ձգեմ դիւրաւ պիտի կենդանեմ գանձս, կամ ապահանութեան պիտի յանձնեմ եթէ իմ խնդիրս չկատարէ։ Ահա այս է իմ ընելիքս։ Հնարին չէ անշուշտ որ չուտ մը բանտ առնեն զինք, աւտի անոր հետ գրամական պայմաններս պիտի կարգադրեմ ատիկանին ճանկը չընկած։

Պ. Տէնդհըմ այս փոքրիկ վտանգն յատակագծին վրայ կը գմայլէր, եւ կ'պարծենար որ այս պէս հնար մը գտած էր գրամ շահելու համար։

— Օրիորդն ըսաւ թէ պիտի կրկնապատիկ վարձքս — չարաչ

* Տես, Ա. Մասն, թիւ 12։

ետևից նա օրիորդ Մընտըրթի ակն արկելով — մինչ՛ ատով ըսել ուզեց արդեօք թէ քսան հինգ թէ աչ յիսուն ոսկի պիտի կրկնատակէ։ Եթէ լոկ քսան հինգ ոսկի կրկնապատակէ, միայն եօթսուն հինգ ոսկի գրպանս պիտի մանէ, բայց եթէ յիսուն բռնել կուզէ, այն ժամանակ հարիւր քսան հինգ ոսկւոյ պիտի հասնի գումարը, և այս ալ իբր առ հաչիւ պիտի ընդունիմ, վասն զի եթէ կարենամ իմ ծեր մեծաւորէս ալ հարիւր քսան հինգ ոսկի չահել, երեք հարիւր կլորիկ ոսկի պիտի դրպանեմ, և այդ գումարով իմ կեանքս հանգիստ կրնամ անցնել։ Եւ ես արդէն կ'գուշակէի որ իմ ծեր մեծաւորիս ապրելու կերպէն բան մը պիտի դուրս գայ։ Տէ՛ր Ատուած, ի՛նչ անգամ մարդ է այն . . . քանի վատ է աշխարհս, և իմ ծերուկ ակրս վատաբոյն անձն է անոր մէջ։

Այսպէս կ'խորհէր առաքինի Պ. Տէնդհըմ, որ մինչդեռ իր տիրոջ ենթադրական անզգամութիւնը կ'նշաւակէր, թէև այս մասին ապացոյց մը չունէր, իր կատարած անարդ դերին վրայ բալրտվին կայր էր։ Բայց Պ. Տէնդհըմ իր այդ ցածութիւնն իրեն ճարպիկ գործ կ'գովէր, և տարբեր դոյնով կ'տեսանէր բոլոր այս գործողութիւնն, և բաց աստի՝ խղճմտանքի նչոյլը չունենալով, խնդրոյն բարոյական նկատումներէ ազատ էր, և կ'կարծէր թէ իր կրկնելիք երեք հարիւր ոսկին պատուով չահուած գումար մը պիտի լինէր։

Ատրիան Լանգտաղր, որ տակաւին Տօք. Ռոմրամայրի անձին մէջ պահուած էր, քանի կ'դղար թէ ինք վատանգի վիճակի մը մէջ կ'գտնուէր։ Իրաւ է որ Տէնդհըմի վրայ վատահութիւն չունէր, բայց երբէք մտքէն չէր անցներ որ իր ապաստարն այնքան հնարագէտ կրնայ լինիլ որ մանր մունր փաստեր իրարու կապելով, իրեն դէմ գատ բանալու չափ պիտի յաջողէր։ Իսկ բնաւ երբէք չէր կարող երևակայել որ Տէնդհըմի և Օր. Օլիվի մէջ կրնար հաղորդակցութիւն մը հաստատուիլ, քանի որ բնաւ բան մ'ըսած չէր իր ապաստարին և ըստ երևոյթին չկար բան մ'որ սաստ Տօք. Ռոմրամայրի և Ատրիան Լանգտաղրի անհետացման մէջ կապ մը հաստատէր։

Տէնդհըմի և Օր. Օլիվի յաջող տեսակցութեան հետևեալ առաւօտուն՝ Ատրիան Սըր Ճօն Մընտարրսէն նամակ մը ստացաւ որով կ'հրաւիրէր պինք Մարլօ գնալ դիշերն հոն մնալու, վասն զի կ'ըսէր թէ շատ կարևոր նիւթի մը վրայ իրեն հետ խօսիլ կը փափաքէր։

— Քանի գիտեմ — կ'գրկէր զուարթ Սըր Ճօն, որ դուք չատ պրաղած էք իմաստասիրական ուսմամբ, բայց անդուլ գործ և ոչ զուարճութիւն ընտանեկար է մարդուս, այսպէս եթէ մի քանի ժամուան համար ձեր տեսակցութեան հաճոյքն ինձ շնորհէք, տարակոյս չունիմ որ ձեզ համար ալ ախորժելի պիտի լինի։ Կը յաւիմ խնացնելու որ իմ դուստրս բացակայ պիտի գտնուի ձեր այցելութեան ժամանակ, բայց հաւանական է որ ձեր մեկնելէն առաջ վերադառնայ։

Այս կէտին վրայ Ատրիան նամակը վար դրաւ և սկսաւ լըրջօրէն խորհիլ թէ արդեօք հարկ է այս հրաւէրն ընդունիլ թէ ոչ, քանի որ օր. Օլիվ տարակոյս պիտի գտնուէր երկար խորհրդածութենէ ետք՝ այս եղրակացութեան եկաւ թէ պէտք էր ընդունիլ հրաւէրն, քանի որ նոյն միջոցին այնպիսի մտատանջութեան մէջ կ'գտնուէր իր վիճակին դժուարութեանց վրայ, որ որոշեց Սըր Ճօնի յայտնել ամեն բան և անոր կարծիքը խնդրել իր ապագայ ընթացքի մասին։ Նա կ'վախնար Օր. Օլիվի յայտնել իր այլասիրութեան գաղնիքն, վասն զի քալ գիտէր որ նէ կ'ծաղրէր աստուածախօսներու վերագրուած զօրութիւնները, և կ'մտածէր բանաւոր պատճառներով, որ օրիորդը գինքը խելագարի տեղ պիտի դնէր։ Բայց Սըր Ճոնի հետ կրնար տարբեր կերպով վարուիլ, վասն զի Ատրիան կ'յիշէր որ Պատոնն Թագուն պիտութեանց մասին բաւական փորձառութիւն ունէր և տեսած էր շատ մը բաներ որ բնութեան օրինաց ներհակ պատահած էին, այսինքն՝ բնութեան այն օրինաց որ առ հասարակ ծանօթ են մարդկան։

Այս պարագայից մէջ՝ Պատոնը չպիտի ուրանար որ հոգիներու տեղափոխութեան պէս հետաքրքրական բան մը կրնար տեղի ունենալ, և Անտրիան դիտէր որ իր յատուկ կենաց փորձով կրնար ապացոյցներ տալ Պատոնը համոզելու համար, թէև սկեպտիկ մ'էր, թէ Ատրիան Լանգասդրի հոգին իրապէս Տօք. Ռովրամայրի մարմնոյն մէջ Թագչած էր։ Ապա կրնար Սըր Ճօնի կարծիքը խնդրել Ռովրամայրի մարմնէն մերկանալու միջոցներուն վրայ, որպէս զի իր յատուկ ինքնութիւնը գտնէ, վասն զի Սըր Ճօն ծանօթ էր աստուածիմաստութեան (theoeophy) շատ վարդապետներու հետ, որ թերևս այս հանելուկին բանալին գտնելու յաջողէին։ Անտարակոյս աստուածիմաստներու մէջ պիտի գտնուէր անձ մ'որ Տօք. Ռովրամայրի չափ գիտութիւն ունենար եղած չարիքը դարմանելու, և այն տարիքոտ մարմնէն

հոգին ազատելով իր բնիկ մարմնոյն մէջ վերստին հաստատէր։

Այս եզրակացութեան գալով՝ Ափրիան նամակ մը գրեց ո-րով հրաւէրն ընդունիլը կ'յայտնէր, բայց բոլոր գիշերը ճամբու կ'մերժէր, քանի որ իր ուսումնասիրութեանց վերադառնալու կ'փափաքէր։ Բայց այս էր իրողութիւնն՝ թէ նա կ'վախնար որ իր բացակայութեան ժամանակ թերևս գէշ մը պատահէր կլեն-ճիոը լուծելու համար, հետևապէս չէր ուզեր բացակայ գըտ-նուիլ խորհելով որ կարելի է պատեհ առիթ մը կրնայ պատահիլ իր ազատութիւնը ձեռք ձգելու համար։ Բոլոր տունն ոգինե-րու ազդեցութեամբ լի էր, վասն զի՝ Տոք. Իովրամայր բնակա-նապէս իր երկրային մարմնոյն մէջ գտնուած միջոցին անընդ-այցելութիւններ կ'ընդունէր անպատար հոգեկան աշխարհի բը-նիկ բարեկամներէն, այնպէս որ երբեմն Ափրիան այլևս պակ-զգացումով մը կ'հաճախուէր որպէս թէ եթերական էակներու խմբի մը մէջ կ'գտնուէր, որոց մարմիններն՝ անշօշափելի և ան-տեսանելի, ամեն կողմէ վրնք կ'շրջապատէին։ Ինչ որ ունէր պիտի տար եթէ ոգիներ կոչելու կարողութիւնն ունենար, այն-պէս որ անոնց հետ հաղորդակցելով իր այս անախորժ վիճակէն. ազատելու ճար մը գտնէր, բայց որքան որ տան մէջ գտնուած գրեանց մեծագոյն մասն, նոյնպէս Տոք. Իովրամայրի գաղտնի թղթերը կարդացած էր, բնաւ հմայք մը կամ արարողութիւն մը չէր գտած որով կարող լինէք իր փափաքը կատարելու։

Կային ժամեր՝ երբ տան վրայ սաւառնած տարօրինակ ոգե-կան ներգործութիւնը չափէն աւելի կ'գրգռէր Ափրիանի ջի-ղերն, և կ'բաղձար այդ ոգերնակ միջնորդէն խոյս տալով արտաքին գործնական աշխարհը մտնել։ Տոք. Իովրամայր իր երկարատև ծառայութեամբ, իր ինքնաչարչար և ճգնաւո-րական կեանքով չափէն աւելի ընդունակ ըրած էր իր մարմինն ոգեկան ազդեցութեանց, և հետևակ որ իր մարմինը Ափրիանի յանձներ էր, անբազդ երիտասարդին նիւթասէր հոգին ստատիկ կ'նեղուէր անտեսանելի և անծանօթ աշխարհի մը ներգործու-թենէն։ Ի հարկէ Տէնդըմ ոչ ինչ չէր զգար քանի որ իր հոգին բոլորովին հեշտասէր և իր մարմինը բոլորովին կոշտ էր, և հե-տևապէս չէր կարող չափել կամ թրթռալ ոգեկան իրերու ազդեցութենէ։ Սակայն Ափրիանի մարմինն իրեն օտար լինելով, իր իշխանութենէ դուրս կ'գտնուէր, և այնպէս կ'թուէր իրեն որ երկու նեթկալ աշխարհներու միջև չեզոք գիրք մը բռնած էր, մինչ թռչուն անկարող, նոյնպէս վեհը մտնելու հաստատա-պէս անզօր։

— Պիտի ցնորիմ եթէ այս կեանքս չարունակուի — ըսաւ իւրովի՝ երբ նամակին հասցէն կ'գրէր — վայրենիի մը կ'նմանիմ որ յետին ծայր բարեկիրթ մարդերու մէջ կ'նետուի։ Կ'զգամ աղէտութիւնը, բայց չեմ կարող պատասխանել, այնպէս որ միայն տանջանք կ'կրեմ ասոր վիճակիս մէջ այլ ոչ անոր հաճոյքն։ Եթէ մինչօրէն ետք՝ քանի մը ժամ Մարլօ անցնեմ կարելի է քիչ մը սովորիմ և հոգեխօսական այլայլութենէ ազատիմ։

Այսպէս նամակը գրկեց և Տէնդհըմի ըսաւ որ հետևեալ օր Էմրոզէտէ պիտի մեկնի այցելութիւն մ'ընելու համար, ըսպասաւորն այս լսելով շատ դոհ եղաւ, և նոյն իրիկունն իսկ հեռագիր մը քաշեց Օր. Մընտըրսի յայտնելով որ կարելի պիտի լինէր միւս օր տան խուզարկութիւնն ընել։

Միւս կողմէ՝ Օր. Օլիվ բան մ'ըսած չէր հօրը Տէնդհըմի յայտնութեանց մասին, այլ միայն խնդրած էր որ Տոք. Ռոմբսմայրը Մարլօ հրաւիրէ, և ապա իմաց տուած էր որ մտադիր էր մեկնելու։ Նախ Սըր Ճօն դէմ կեցաւ այս տարօրինակ վարմունքին, բայց յետոյ իր հնարամիտ աղջկան ըսածներուն համոզուեցաւ։

— Չեմ հասկնար բնաւ թէ ի՞նչ է այդ ընթացքիդ նպատակը — մրմռաց նա բարեսրտութեամբ — բայց գոհ պիտի լինիմ Տոք. Ռոմբսմայրը տեսնելով, որ շատ հարտար մարդ մ'է, թէև դու չես սիրեր զինք։

— Եթէ իրօք կ'սիրեմ թէ ոչ կախում ունի բոլորովին այս վերջին օրերս առնելիք լուրերէս — պատասխանեց օրիորդը։

— Բայց ո՞ւր պիտի երթաս Լանգասդրի վրայ լուր առնալու համար — հարցուց հայրը հետաքրքրութեամբ։

— Այդ պիտի ըսեմ քեզ, հայր իմ, երբ վերադառնամ — պատասխանեց Օլիվ արագօրէն։

— Լա՛ւ, ուզածդ ըրէ — ըսաւ Սըր Ճօն հառաչելով — գո՛հ ատուդիս՝ հանելուկ մ'ես։

— Անշուշտ — ըսաւ Պէտի Ութսօլ, որ նոյն պահուն ներս մտաւ — նէ կին մ'է և այդ բաւ է ամեն բան մեկնելու։

ՁԱՅՆԻ ԵՒ ԵՐԱԺԻՇՏՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Գիտէ որ մեր ընտրած նիւթը ձայնի վրայ է, կ՚արժէ հո՛ս երկարօրէն խօսիլ նաև երաժշտութեան վրայ։

Գործիական և ձայնական երաժշտութիւնը մագնիսական ատոյգ զօրութիւն մը ունի, անհուն ներգործութեամբ մը կ՚ազդէ մեր զգայարանքներուն, մեր երևակայութեան, մեր իմացական կարողութեան և հետևաբար մեր բոլոր գործարաններուն վրայ, առողջ մէկ հիւանդ վիճակի մէջ։ Երաժշտութեան ազդեցութեան աստիճանը ուղղակի կախում ունի ականջի փափկութենէն, հոգեկան տրամադրութենէն, նուագողին ճարտարութենէն, եղանակէն, յանգէն, եւ . . . . Զանազան յանգեր, եղանակներ և ձայներ մեր մէջ այլազան զգայնութիւններ յառաջ կը բերեն։ Պատերազմական երաժշտութիւնը պինւորը կը կենդանացնէ և կը խանդավառէ. կրկնաչափ ըստած կտորները անոր քայլերը կ՚արագացնեն և յոգնութիւնը մոռցնել կտան. ընդհակառակը, դանդաղ եղանակ մը, ծանրերգութիւն մը քայլերը կը յամրացնեն։ Կէդրի իր մէկ բարեկամին՝ որուն հետ երկար չրջագայութիւններ ընելը կը սիրէր՝ քայլերը չափաւորելու համար հետևեալ ռազմագիտական հնարքը կը գործադրէր։ երբ իր բարեկամը չատ արագ կը քայլէր, հնչակաւոր երաժիշտը քթին տակէն յամրերգ մը կը մրմռար, և բարեկամին քայլերը իսկոյն անոր յանգերուն կը յարմարէին անզգալաբար։ — Նաւաստիները երբոր ծանր բեռներ վերցնեն և կամ անուորդը գործնեն, իրենց ոյժերու գործածութիւնը հաւասարապէս բաշխելու և համաչափ գործելու համար յանգաւոր եղանակ մը կ՚երգեն։ Նոյնպէս ուրիշ բաներ որ միահաւասար և միատոյն բան մը կը քաշեն կամ կը վերցընեն, միշտ յարմար եղանակ մը կը գործածեն։ Ընդհանրապէս մէկերնին մին առանձինն մի տուն կ՚երգէ, որուն կը հետևին միւս գործաւորները միահաւասար կրկնելու համար նոյն տունը կամ չարունակութիւնը. այս մէկուցը իրենց աշխատութիւնը կը պիրացնէ և ոյժերը հաւասար կը բաժնէ։ Հէգևոր և կրօնական երաժշտութիւնը մարդս յափշտակութեան մէջ կ՚ընկղմէ, որ-

*Տե՛ս Ա. Մ—ռ, 1897 թիւ 11։

քը դէպի Աստուած կը բարձրացնէ և աղօթելու ու պաշտելու կը տրամադրէ։

— Ջո–ռբլներէը (allégro) կը զուարճացնէ.

— Յոդոդոլը (andante) զմեզ ախորժաբար մտ վիճակի մը կ'ենթարկէ. —

— Ամբերէը (amoroso) իղձերու կոհակներ, քաղցր մտայուզութիւններ կը պատճառէ, և զմեզ սիրոյ հեշտալիր երազներու մէջ կ'օրօրէ, որոնք երիտասարդութեան մէջ իրենց բուրմունքով հոգին ու մարմինը կը գգուեն . . . ։

Բարձր եղանակները, կլկտուր յանդը, սուր և մեծագործ ձայները ջիղերը կը գրգռեն և զայրոյթի ու բարկութեան կ'առաջնորդեն։ Անուանի Ջութահաղ Տիմոթէոս փռիւգական եղանակներածելով Մեծն Ալէքսանդրը կը կատղեցնէր, և երիտասարդ յաղթականը հանդարտեցնելու համար Լիւտեան եղանակները ձեռք կ'առնէր։

Նուագարաններու վրայ բարձր, ճղուն և սայրատուր ձայնանիշերով երգուած ինչ ինչ կտորներ կրքեր կը յուզեն, վայրենութեան կը մղեն և վայրագ բարբարոսութիւններ գործելու տրամադիր կ'ընեն։ Պղիւրիոս պատմագիրը կ'ըսէ թէ Կիւնէպ քաղաքի բնակիչները երաժշտութեան թոյրովին անծանօթ ըլլալնուն անդիմութեան մէջ բոլոր միւս մարդիկը կը գերազանցեն, և ուրիշ ոչ մի քաղաք այնքան պատժապարտ ոճիրներ ունեցած չէ։ Նոյն պատմագիրը կը յիշէ թէ Թէբացիները և Արկադէացիներուն բարոյականը քաղցրացնելու համար՝ որոնց տմարդութիւնը առակի կարգ անցած էր՝ երաժշտութիւն պէտք եղաւ, Պիւթագորաս և Պղատոն երաժշտութեան ուսումը բոլոր միւս լաւ դաստիարակութեանց լրացուցիչը կը նկատէին։

— Գոլտրիկ և նուազուն դեղեղանները, մանաւանդ կիսվար (bémolisé) եղանակներու մէջ, վշտերը կը թեթևցնեն և ախտերն կատաղի հակները կը մեղմեն։

— Որփէոսի քնարը սոսկալի Կերբերոսը կը քնացնէր։

— Ֆիրոնինը Աքիլլէսի եռուն խանդը կը չափաւորէր։

— Դաւիթին տաւիղը Սաուղի մելեգնութիւնը կը մեղմէր։

— Ալիմպիական խաղերու յաղթանակը տանող արնգոյնը իրար ջարդելու վրայ եղող երկու կողմանց ատելութիւնը մարեց։ Եւ Թերպանդր իր քնարին ձեչաերով Սպարտայի մէջ ծագած ապստամբութիւնը պսպեց։

Երաժիշտ մը Տանիմարքայի էրիկ Թադաւորը իր պալատականներով ժիասին վոտիոխակի ամենախոր ակնարկենէ մը ամենամեծ ուրախութեան անցուց։

Մօրիս դիւանադպիրը իր կնոջ տհաճ բնաւորութիւնը վէճ ածելով կը մեղմէր։

Մեր օրերը Ամերիկայի մէջին անտառներուն մէջ արիւնահեղ կռուի բռնուած խումբ մը թշնամիներ տեսնուած են, որ կիթառ ածելով երգող եւրոպացիի մը շուրջը հաւաքուելով կռիւը դադրեցուցած են։ Ներդաշնակութեան հրապոյրն յաղթուած ու թուլացած այս վայրենիները պահ մը մոռնալով իրենց վրէժխնդրութեան ծարաւը, իրարու հաշտութեան ձեռք տուին։

Հետեւեալ պատմութիւնը ըստ հաճոյս չինուած պիտի համարուէր եթէ այս վերջին ժամանակներս պատահած չըլլար։

Սպանիական վոքրիկ քաղաքի մը մէջ հաւատաքննիչները իրր ամբարիշտ ըրպարտեցին երաժիշտներու խումբ մը՝ պարողներ և պարուհիներ՝ որ Պոլէրօ (Boléro) խաղալով ժողովուրդը կ'ըրօսցնէին։ Այս դժբաղդները ձերբակալուելով հաւատաքննութեան առեանը առաջնորդեցին։ Ինքզինքնին որչափ որ կրցին պաշտպանեցին, բայց և այնպէս ողջ ողջ այրուելու պիտի դատապարտուէին եթէ չունենային այն խելացի յղացումը թէ պատժուելէ առաջ անդամ մը իրենց առջև պարելու թոյլտուութիւնը խնդրել դատարանէն։ Խնդիրքնին իրաւացի դատուելով արտօնուեցաւ։ Խոյն կիթառներուն և մանտոլիններուն քաղցրայոյզ ձայները լսուեցան, և պարողները պարուհիներուն միացած նուագաւոր չարժումներով դեահնը կը սրոմփէին։ Իրենց չարժումները, իրենց ձևերը, երաժիշտներու ձայնարկութիւնները՝ որք կ'ընկերանային նուագարաններու ձայնին՝ դատաւորները խայտացուցին։ Եղանակներու ներդաշնակութիւնը և Բօլերօի հրապուրիչ (մի տեսակ պար) կերպերը զանոնք կամաց կամաց մագնիսացուցին, այն տեսեն ամենը մէկէն իրենց դահլիճն ելնելով սկսան դատապարտեալներուն խառնուիլ և երգել ու պարել անոնց հետ, որք այս ընդհանուր պարէն ետքը ներման և նոյնիսկ վարձատրութեան արժանացան . . .։

Շատերուն արդէն ծանօթ է Ջուիցերիացի լեռնարնակներու վրայ Ռանչ փէ վաշ (Ranz des vaches) ըսուած երգին ունեցած ազդեցութիւնը. տակաւին եղանակները նմանօրինակ ար-

գիւնք մը յառաջ կը բերեն Օվերնցի և Պուրպոնցի դեղջուկներուն վրայ։ Նոյն բանն է նաև ամեն տեղ, ամեն երկիր, ամեն ժողովուրդ իր սիրած եղանակը, իր ազգային երգը ունի որ իր վրայ մագնիսական ներգործութիւն մը յառաջ կը բերէ։

Խել մը ջղային հիւանդութեանց մէջ երգը և երաժշտութիւնը դգալի սիմփանք մը կ'արտադրեն. մեղկութիւնը, մելամաղձութիւնը, ջղագարութիւնը, զառանցանքը, խելագարութիւնը, եւ երաժշտութենէ չատ մեծ օգուտներ կը քաղեն։ Արդէն թէ նախնի փիլիսոփաներուն և թէ արդի ժամանակիս ու ամեն երկրի բժիշկներուն գործերը ջղային դրութեան և երեւակայութեան վրայ երաժշտութեան ազդեցիկ ոյժը կը հաստատեն. խանդավառութիւն, հիացում պատճառելու համար, կամ ջղային վիճակէ կախուած հիւանդութիւնները բուժելու կամ մեծաւ մասամբ՝ բարելաւելու համար կը բաւէ միայն գտնել այսինչ կամ այնինչ անձին գործարաններուն համակրած և ախորժած քաղցրահնչութիւնը կամ ներդաշնակութիւնը, նուագարանը կամ ձայնը։

Ֆրանսայի կայսերական թիկնապահ զօրաց առաջին վիրաբոյժ Տոքտօր Թէրէն երաժշտութեամբ բժշկեց վիրական սըրկախա մը (Tétanos traunatique), որուն ատամնութիւնը կ'ըսպառնար սպան մը կեանքը բառնալ։

Ֆրանսայի բժշկական համալսարանի ակադեմական Ընկերու Հատաքածուն ձայնական և դործնական երաժշտութեամբ և բժշկուած բազմաթիւ կատաղի յիմարութեանց չատ նշանաւոր դէպքեր ու նկատողութիւններ կը յիշատակեն։

Տոքտօր Բուրդուա մահը անխուսափելի եղած խոր թմրութեան մը մէջ երաժշտութեան մագնիսացումը գործադրելով օգտուեցաւ։ Ահաւասիկ այդ ճարտար բժիշկին պատմածը։

«Քնարեր ծանր ջերմէ տառապող կին մը կը խնամէի, արուեստին միջոցները չկրցին մեղմել չարիքը. և 18 րդ. օրը հիւանդը իր վերջին ժամուն կը մօտենար։ Հիւանդին տնէն մեկնելու պահուս սրահին մէջ տաւիղ մը տեսայ, և այս գործիքը հիւանդին կազմութեան վրայ երաժշտութեան ազդեցութիւնը փորձելու գաղափարը ծնաւ յիս, որ առողջանալու յոյս մը բնաւ չէր ներշնչէր։ Մերձականերէն քանի տաւղահար մը բերուեցաւ խնդրուեցաւ որ քանի մը դեղեցիկ կտորներ նուագէ. տաւղահարը սկսաւ մեծ եռանդով նուագել։ Քառասուն վայրկեան յետոյ նկատեցի որ հիւանդին ընչաւութիւնը կը վերսկսէր, իս-

վայն լանջին ելևէջը չատ արոշ եղաւ և սրտին բարախումները երաժշտական չափարերութեան հետ զուգաչափ ըլլալ կը թուէին։ Տաղտկարը իր եռանդը կրկնապատկեց, հիւանդին բոլոր անդամներուն մէջ կենդանացուցիչ ջերմութիւն մը ծաւալեցաւ, բազկերակը բարձրացաւ և կանոնաւորուեցաւ, կուրծքէն անդադար խոր հառաչանքներ դուրս կ'ելլէին։ Յանկարծ սկսաւ քթէն արիւն հոսիլ և 200 կրամի չափ փոքր արիւնահոսութենէ մը վերջը, հիւանդը աչերը բացաւ և սկսաւ խօսիլ։ Ինչ օրէն ապաքինութեան մէջ մտաւ և ալ անկէ ետքը դեռ ատի կինը կատարեալ առողջութիւն մը վայելեց։»

(Շարունակելի)

ՏՕՔԹ. Կ. Ճ. ՓԱՇԱՆԱՆ

ՉԻՆԱՍՏԱՆ

Չինացի կանանց կրթութիւնը։ — Ընտանեաց հայր մը դրեթէ միշտ կը տրամի աղջկան մը ծննդեան առթիւ։ Աղջիկ մը ծնելուն պէս պատուհան զգեստի կտորներու վրայ կը դնեն զայն, և երեք օր ամբողջ չմեռնելու չափ հոգ կը տանին անոր, երկրորդ օրը հայրը աղջիկը թեւերուն մէջ կ'առնէ և զայն կը տանի այն դահլիճը որ առհմանուած է նախնեաց երկրպագութեան, զանի նախահարց ընծայելու համար։

Քանի մը բարեկամներ անոր կ'ընկերակցին այս հանդէսին, ոմանք աղուսներ բռնած, ոմանք կղմինարներ, և երախային հօրը նախնիքներու ներկայացած պահուն այս կոշտ առարկաները շարունակ անոր երեսին վրայ կը բռնեն։ Ամեն բան արտայայտիչ է այս տեսակ սովորութեանց մէջ, ամեն բան դասեր են իգական սեռին համար։ Ուրախութիւնը դուր կ'այտնէն մանչու մը ծննդեան պահուն, տխրութիւնը դուր կեղծելու անդամ հոգ չեն տանիր, երբ աղջիկ մը աշխարհ կուգայ, բաւական յայտնի կերպով կը ցուցնեն ա՞րն է կնոջ դիրքը ընկերութեան մէջ։ Քուրջերը որոնց վրայ կը ձգուին աղջիկները իրենց ծննդեան ժամուն, այս արհամարհական լքումը որու մէջ կը մնանուին անոնք երեք օր ամբողջ, առաջէն կը հասկցնէ իրենց թէ ինչ անարգանքի և արհամարանքի առարկայ պիտի ըլլան եթէ առաքինի հոգի մը և անբասիր վարք մը բռնի իրենց վրայ չհրաւիրեր աշխարհի յարգանքն և դորովը։ Իրենց (ձեռագրքին) նայելով հօրը տարեկան հաստկնուն մէջ պէտք է բաժնել տղայքը աղջիկներէն, ու ալ ևս չմոռնալ որ նոյն խոյրին վրայ նստին և նոյն սեղանէն ուտեն։

Այն ատենէն կիները կ'սպրին կանանոցին խորը իրենց մօրը խուզարկու աչքին առջև։ Գահաւորակներով դուրս կ'ելլեն, երեսին հաստ քողով ծածկուած, մինչև իրենց ամուսնութեան ժամանակ պէտք չեն բնաւ երիկ մարդու երես նայիլ ոչ ալ տեսնուիլ անոնցմէ։

Իակ անոնց կրթուԹիւնը բոլորովին յանձնուած է ընտանիքի մօրը հոգատարուԹեան, ըստ Զինացւոց, կնոջ մ'առաքինուԹիւն չկայանար վերջին ծայր զարգացած խելքի մը՝ կամ բազմաչխատ դիտուԹեան մը մէջ։ Ծանրաբարոյ պարկեշտուԹիւնը անդրդուելի զգաստուԹիւն մը և կատարեալ բարեվայելչուԹիւն մը կ'բաւեն կին մ'առաքինի ընելու։ Գալով իր կրթուԹեան, պէտք է հիմնաւոր ըլլայ կ'ըսեն բարոյագէտները, այս կերպով կ'իմանան անոնք Թէ կինը պէտք է քաջ ճանչնայ տնտեսական խնայողուԹեան ճիւղերը և զաւակները կրթելու փափուկ արհեստը։

Էրիկ մարդ մը կրնայ իր բոլոր կեանքը ուսանիլ, կրնայ ընտանենալ ամեն տեսակ դրական և գիտնական գործերու, և մեծ գիտական կամ գրագէտ մ'ըլլալ, բայց կին մը չկրնար, և պէտք չէ հետևիլ այս օրինակին, պարապիլ հաղուագիտ ժամերը կրնայ միայն նուիրել գիտուԹեան և ուսումին, իր ուսումնասիրուԹիւնը, տնտեսուԹիւնը, տղայքը իր բոլոր մտածումը կը դրաւեն։ Կին մը պէտք է իր կամքը խնդարհէ երկանը և անոր ապդականներու քմահաճոյքին առջև։

Պէտք է իր քեռայրները սիրէ, պէտք չէ անոնց կարծիքները և անոնց համղուԹիները վիրաւորէ։ Իր էրկան միւս կիներէն պէտք չէ նախանձիլ։ Նէթէ շաւակներ ունի, պէտք է ղանոնք կրթէ այն կերպով որ օգտակար և մանաւանդ պարկեշտ մարդիկ ըլլան, եԹէ մանչ են, և առաքինի կիներ եԹէ աղջիկ են։

ԵԹէ ժիր կեանքէ մը զատ գրականուԹեան մէջ քաջ ըլլայ, պէտք է ղոյն յայտնելու ամեն առիԹէ զգուշանայ, վասն զի իմաստակուԹենէ և պատճանքէ աւելի գարշելի բան չկայ կնոջ մը համար։ Զինացիք շատ աւելի կը փափաքին տեսնել իրենց կիները որ ժամանակին իգական սեռի գործերով անցնին, ինչպէս օրինակի համար, մետաքս գործել, քան Թէ ղանոնք փիլիսոփայական և գիտական վիճաբանուԹենց մէջ տեսնել։ Այս մասին մեր խօսքը վերջացնելէ յառաջ պիտի յիշենք Զինական գրքէ մ'առնուած քանի մ'առածներ։

« ԱշխատուԹիւնը կանանց անմեղուԹեան պահապանն է, քանզի անգործ մնալու ժամանակ չձգեր անոնց, Թող բոլոր տարին առաջիններ ըլլան գործի և վերջիններ հանգստեան համար։

« Դեռատի աղջիկ մը պէտք է մօրը սիրքան մնայ ըլլայ որքան իւր չուքը։ ՊչրասիրուԹիւնը և անոտի ընԹերցումը խիստ վտանգաւոր են, քանզի աղջիկ մը աւելի մեծ եռանդով անձնատուր կ'ըլլայ այն տարիքին։

« ՊարկեշտուԹիւնը, լռուԹիւնը, քաղցրուԹիւնը և երկչոտուԹիւնը ճշմարիտ զարդն են դեղեցկուԹեան։

« Աղջկան մը հլուԹիւնը, համբերուԹիւնը, աշխատուԹեան սէրը, իր յարգանքը հօրը և մօրը համար և բարեհամուԹիւնը եղբօրը համար իր համբաւը կը վճռեն։

« ՏնտեսուԹեան մէջ անարգ բան չկայ բարի կնոջ մը համար։ Կկոցը և ասեղը իր զբօսանքը կ'ըլլան։ Իր հոգատարուԹեան առարկան է տան մաքրուԹիւնը։ Նէ պատիւ կ'համարէ ամբանցին ծառայել և անոր ճաշը պատրաստել »։

Հիւանդանոցներ. — Զինական օրէնքներու սկզբունքն այն է որ, ամեն տկար կամ Թշուառ անձ իրաւունք ունի ձեռնտուուԹեան։

Այս իրաւունք անգործադրելի չմնալու և խաւսլութեան պատճառ չտալու համար, հիւանդանոցներ հաստատուած են որ ծերերը և տղայքը ընդունելու սահմանուած են։ Ասոնցմէ քնագիրքը այդ յիշատակելի օրէնքին։ « Ծերերը և տարիքը առած կիները, որոնք թէ մկկը և թէ միւսը այրի կը գտնուին, որբերը և ընդհանրապէս այն ամէնքը որ անրուժելի հիւանդութենէ մը կամ ծանր տկարութենէ մը բռնուած, և ամէն բանէ զուրկ են, որը ոչ ազգական և ոչ բարեկամ ունին որ իրենց օգնէ, և չեն կրնար ինքզինքնին հոգալ, մանաւանդ նոքա պիտի ընդունին իրենց բնակարանին ծախքը և անունդը այն հաստատութիւններուն մէջ որ հիմնուած են այս նպատակաւ։ Այն մանտարինը որ չհամակերպիր ներկայ օրէնքին՝ խիստ կերպով պիտի պատժուի։ »

Ամուսնութիւն։ — Զինաստան երկու տեսակ ամուսնութիւն կայ, առաջինը օրինաւոր ամուսնութիւն կը կոչուի։ Այս միութեամբ կինը երկան աստիճանին և պատիւին կը բարձրանայ, և այս իրաւունքէն կրնայ մերժուիլ խիստ հաղուագիւտ պատճառով մը՝ զոր օրէնքը մանրամասնօրէն նախատեսած է։ Երկրորդը կոչուած է ամուսնութիւն երկրորդ կարգի, որ ուրիշ բան չէ, բայց միայն օրինաւոր հարճաւորութիւն մը, այն կինը որ այս վիճակին ներքեւ եղած է երկրորդ կարգի կին կը կոչուի, երկրորդ կարգի կինը միշտ հնազանդ է առաջինին հրամաններուն և քմահաճոյքներուն։ Ասկէ կը հասկցուի թէ կեանքը որքան տաժանելի է այն կանանց համար, որոնց երջանկութիւնը իրենց հակառակորդ տիրուհիներու նախանձու կիրքերը կր գրգռէ միշտ, և ոչ ոք իրենց ամուսնային սէրը կարող չէ ըստ բաւականի պաշտպանել։

Զինական օրէնքը իր մեծատառ էջերուն մէջ կը դրէ թէ բազմակնութիւնը ներելի է Զինաստանի մէջ. և սակայն այս օրէնսդրական կարգադրութիւնը իրաւացի չէ ըստ իսկ բառին բուն իմաստով։ Զինաստանի մէջ երբեք չեն կրնար երկու կին ունենալ առաջին կարգի, ամէն տան մէջ միայն մէկ բարձրագոյն տիրուհի կրնայ ըլլալ, մէկ ընակից երկան տարիքին և պատիւին հաւասար, մինչդեռ երկրորդ կարգի կին, կրնայ ըլլալ, որքան որ ընտանեաց պետը կարող է տպրեցնել։ Օրինաւոր ամուսնութիւնը ենթարկուած ըլլալով անհրաժեշտ և բազմաթիւ ձևակերպութեանց, հետզհետէ զանոնք աչքէ պիտի անցնինք։ Ամուսնութեան արարողութիւնը երկու մեծ մասերու կ'բաժնուի, 1 նշանառութ, 2 հարսանիք։

Ամէնքն ալ գիտեն որ կանանց կենաքի պայմանը ի Զինաստան, գիտեն որ անոնք իրենց կեանքը կանցնեն կանանոցին խորը, հեռի երիկ մարդոց աչառութենէ, որոնք հեռանալ պարտաւոր են անոնց ներկայութենէ, որքան որ ամուսնացած չեն։ Ուրեմն անհրաժեշտ են խնամախօս կիները, քանի որ անձամբ չեն կրնար տեսնել այն կինը որու հետ կուզեն ամուսնանալ, անշուշտ պետք կ'ըլլայ վստահիլ երկրորդ անձի մը խօսքին, և այդ երկրորդ անձն միջնորդն անուն կ'առնէ։ Ասոնցմէ գործը ընդհակ կը կատարուի, երբ երիտասարդ մը կը փափաքի ամուսնութեան դաշինք ընել ի Զինաստան, իւր հօրը և մօրը հաւանութիւնը խնդրելէ և ընդունելէ վերջ, միջնորդի մը կը յանձնէ երթալ աղջկան հօրը մօրը հաւանութիւնը խնդրել։ եթէ անոնք մեռած են, անոր անպրանիկ եղբօրը, եթէ չունի, նահանգին կուսակալին։ Ատենակալի մը միջամտութիւնը Զինական օրէնսդրութեան

բուն ոգւոյն մէջն է։ Ձինուցանի կայսրը ժողովրդին իբր Հայրը մայրը նըկատուած է, և այնպէս կ'անուանուի, նոյնպէս իր իշխանութիւնը լրացուցիչն է հօր մը իշխանութեան։ Կուսակալները, որ իրեն օրինաւոր ներկայացուցիչներն են, իր անուամբ նոյն իշխանութիւնը ի գործ կը դնեն։ Ա.Հաւասիկ այս նկարագրով կրնան ամուսնութեան գաշինք դնելու համար աղջկան մը արտօնութիւն տալ։

Այս համաձայնութիւնները անգամ մ'ընդունելէ վերջ, աղջկան ծնողքը կը հաղորդեն անոր լրջօրէն խորհելու իր բռնելիք ընթացքին վրայ։ Վ.ասն դի պէտք չէ երբեք, սկզբամբ, ստիպել աղջիկ մ'ամուսնանալու։ Ծնողաց կողմանէ առաջարկուած խնդրոյն վրայ խորհելէն վերջ, եթէ երիտասարդ աղջիկը իւր հաւանութիւնը տայ, պէտք է նոյն իսկ երիտասարդին ուղիղ տան պարունակող տոմսակ մը խրկել։ Երիտասարդը կ'առնու զայն անմիջապէս գուշակին կը տանի, անկայ անօթի մէջ կ'նետէ զանոնք և մեկնիկ մեկնիկ նորէն կ'հանէ։ Այսպէս հանուած տուեալը եթէ բանաւոր իմաստ մ'ունենան, պէտք է սկսուած ամուսնութիւնը ի գլուխ հանել, իսկ հակառակ պարագային մէջ՝ պէտք է ետ ձգել։ Այս ուղիղ դուսերը քաղուածներ են Ձինական սրբազան գրքերէն մեկուն մէջէն, որոնց երկոքը ամնոյն, երկուքը օրուան, երկուքն ժամուան և երկուքը աղջկան ծննդեան վայրկեանին կը վերաբերին։ Ուրիշ պարագայի մէջ այս տոմսակը նոյն դերը կը կատարէ ի Ձինաստան, ինչ որ կ'ընէ մեր մէջ ծննդեան աբձանագրութիւնը, միայն թէ քանի որ այս տուեալները կրկին իմաստով են կրնան ուրիշ մեկնութեան յարմարիլ։

Գուշակ մը չկրնար խորել իր պաշտօնին մէջ ընտանիք մը խաւորութեան մէջ ձգելու աստիճան, վասն զի միայն պարզ թարգմանչի պաշտօն ունի։ Բաղդը միայն կրնայ այս ինչ կամ այն ինչ ձևով հանել տուեալները։ Եթէ սխալ թարգմանէ, աստուգելը դիւրին կ'ըլլայ, և դատարանը զայն հատուցանելով օրէնքին խստութեան համեմատ կը պատժէ զայն։

Գուշակին գովէն ելած պահուն, այն երիտասարդը որու բաղդը քարկոյսով եղած է, միշտ իր կարողութենէն վեր ընծաներ կը դրկէ իր նշանածին։ Այս ընծաները ճիւաղի կը կոչուին, այսինքն նշանուքի ընծայ։ Երիտասարդ աղջիկը զանոնք ընդունելէն վերջ անդառնալի կերպով ամուսնացած է։ Վասն զի նշանուքի ընծաները ընդունելը մեր կանոնց քաղաքական պաշտօնեային առջև «այո»ին արդիւնքը կունենայ Ձինաստանի մէջ։ Այժն կին կ'ըսէ օրինագիրքը, որ կը մերժէ միանալ այն մարդուն հետ որու կամաւ նշանուեցաւ, խստութեամբ պիտի պատժուի և բռնի պիտի ամուսնացուի։ Նշանուքի ընծաները դրկած օրուան իրիկունը, երիտասարդը հրաւիրեալ է իր ծնողացը հետ մեծ հացկերոյթի մը աղջկան ծնողացը կողմանէ։ Երիտասարդուհին պէտք չէ ընաւ ներկայ գտնուիլ։ Այս հացկերոյթը, (որ նշանուքի հացկերոյթ կը կոչուի) լմնցած կէսին բարեյաջող համարուած օրը կ'ընտրուի հարսանեաց կատարման համար, վասն զի Ձինացւոց աւելորդապաշտութիւնը այնքան աստիճ է, որ երբէք տեսնուած չէ ամուսնութեան օրինակ մը պայմանել ձախորդ համարուած օր մը։ Սովորաբար քանի մ'օրուան միջոց կը դնեն նշանուքին և հարսնիքին մէջ տեղ, քիչ անգամ կը պատահի որ աւելի երկարաձգեն։ Վերջինը երբ այն օրը հասնի, երիտասարդը, փուռաւոր ձիու մը վրայ նստելով, (ինչպես չէր նշանածն) նշանածին բնակարանը կ'երթայ։ Իրմէ քիչ մը առա-

ջևով մեծ սեղան մը ծաղիկներով և մեառքեր ծածկոցներով ծածկուած կ'օրօրեան, այս սեղանն է որու վրայ հարսը պիտի նստի և որու հարսանեկան սեղանի սխտորը տրուած է։ Անմիջապես վերջը բազմաթիւ երաժիշտներ կուգան, և օդը կը հնչեցնեն զուարթ ֆարֆարներով. անոնցմէ վերջը կը յառաջանայ յաղթական երիտասարդը որու կ'հետեւին ազգականներէ և բարեկամներէ բազմաթիւ սեղեկցներ։ Հոն հասնելուն պէս աղջկան հօրմէն մօրմէն կ'ընդունուի, որ գրան սեմին վրայ կ'սպասէն իրեն և հետը կ'խօսակցին, մինչդեռ մանկամարդ հարսը, քողալ ծածկուած, հարսանեկան պատգարակը կ'ելնէ։ Այն տեղն պատգարակը կը բալրքուի, և բանալին ան մուսնոյն կուտան, որ այնուհետեւ տէրն է անոր մէջ պարունակուած առարկային։ Ստեպ կը պատահի որ ճամբուն մէջ ամուսինը պատգարակը կը բանայ տեսնելու համար որ խնամախօսէն խաբուած չըլլայ, և եթէ այսպէս կարծէ, բարկութեամբ պատգարակը աղջկան ծնողացը կը վերադարձնէ և հարսանիքը կը լուծուի։ Այս իրաւունքը կնոջ չնորհուած չէ։ Այն տեղն ուղեւորները կը յառաջանան նոյն կերպով, երիտասարդին քնակարանը կը վերադառնան, ուր պէտք է վերջանայ հանդէսը։ Տունը հասնելուն պէս ամենքն ալ վար կ'իջնեն և կերթան յարգանօք բարեւել երիտասարդին հայրը ու մայրը, որոնց նոր հարսը սէր և հնազանդութիւն կը խոստանայ։ Անկէ նախահօրց սենեակը կ'երթան, ուր նոր հարսը խնարհաբար երկրպագութիւն կ'ընէ։ Վերջը հարսնասենեակը կ'անցնին, ուր կ'կատարուի բաժակի հանդէսը։ Տղան ազգականներէն մէկը գինիով լի գաւաթ մը կը ներկայացնէ անոր, նա շրթունքը կ'թրջէ, վերջը առաջին անգամ ըլլալով կնոջը քօղը վեր կ'առնէ, գաւաթը անոր կը ներկայացնէ։ Երիտասարդ կինն ալ կը խմէ իր կարգին, և վերջը գաւաթը երկանը կը վերադարձնէ, որ անմիջապէս գետինը զարնելով կը կոտրէ զայն, յայտնելու համար թէ ոչ մէկը այնուհետեւ պիտի խմէ գիրենք միացուց բաժակէն։ Ապա փառաւոր հաշիւերյետ մը կը վերջանայ այս տարօրինակ հանդէսը։

(Շարունակելի)

Թարգմ.- ԼՕՐԻՍ Գ. ՄՍԵՐԵԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ

Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ՎԱՐԻ ԹԱՂԻ Ի ՄԱՂՆԻՍԱ

Շարունակելի

ԹԻՒ 11 (1)

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

ՋԻԳ = 1475

ԿԱՋՄ *հին, արեւելեան, տախտակեայ կաշխարհս, կողմերուն ներքին կողմերը կապոյտ կտաւներ տակցուած են։ Նիւթ՝ թուղթ տամպակեայ, ողորկեալ եւ փոխ ինչ զոյշագոյն։ Թիւղթք 612 կամ 1214 հզր։ Ակիզբն տասն թղթեր պակաս են։* ՄՆՄՈՒ-

ԹԻՒՆ՝ 36.5×26 *հարիւրորդամեթր*։ ԳԻՐ՝ *թղթոգիր, միջին մածրութեամբ*։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ *երկայնական* 27.5×24 *հրդմ*։ Միւնական միջերը *եղած դասարկ միջոցն է՝* 1,5 *հրդմ*։ ՏՈՂՔ՝ 35–36։ ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ *յաս մածուր պահուած չէ, տեղ տեղ յուսանցազարդ պատռած եւ տեղ տեղ ալ թերթերու եզերքն մաշած են*։ ԿԻՍԱԽՈՐԱՆՔ *թուով* 7, *թղ*· 50*ա*, 100*բ*, 204*ա*, 366*բ* 435*բ*, 486*ա*, 555*ա*։ ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԴՔ *կան ամենօրեայ յայտնաւորաց եզերքը*։ ՋԱՐԴԱԳԻՐՔ *եւ* ԹՌՉՆԱԳԻՐՔ *են ամենօրեայ յայտնաւորաց սկզբնատառերն*։ ՎԵՐՆԱԳԻՐՔ *եւ նոյնպէս տեղ տեղ* ԳԼԽԱԳԻՐՔ *կարմրաւ են*։ *Այս ամենն ալ՝ եւ մաշակաւոր վրձինի գործ են*։ ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ *ամեն յայտնաւորաց վերջերն՝ եւ թղ*· 250*բ*, 293*բ*, 346*ա*, 597*բ*, 614*ա*, 611*բ*, 612*բ*։ ԺԱՄԱՆԱԿ *գրչութեան* ՉԻԴ (=1475)։ ԳՐԻՉ Ղազար Քահանայ։ ՏԵՂԻ *ի յԱրծկէ խաղազի՝ ընդ հովանեաւ Ս*· *Աստուածածնայ*։ ՏԷՐ *Տէր Գրիգոր գրոց աշակերտ*։ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ, *Մատենիս սկիզբն եւ վերջն երկուքական թերթ ամբողջ թղթեր կան երկաթագիր գրուած Աւետարանի հատուածք*։

Մատեան՝ ՅԱՅՏՄԱՒՈՒՐՔ

(*Կը պարունակէ Հայկական Տօնացոյցի համեմատ ամեն վկայաբանութիւնները, Գլխաւորները են՝ քիչ մը առելի մանրամասնութեամբ՝ հետեւեալքն*.)

1. Թղ. 1–10 *Թղթերն ինկած են*։ Թղ. 12*ա*, ՈՂՔ *ամէն Թուականիս մերոյ նոր իմն սքանչելիս ի քաղաքն Յուլիայ*։ Սկիզբն. *եւ եղեւ յանկարծակի*։

2. Թղ. 12*բ*· *Վերատին տաւն է վոխման Սբ Աճամնին և վկայաբանութիւն սրբոյն Միւռոնայ քահանային*։

3. Թղ. 20*ա*· Տաւն է *Սբ առաքելոյն Թուդայի*։

4. Թղ. 22*բ*· Տաւն է Դանիէլի մարգարէին և Տիմոթէոսի։

5. Թղ. 33*բ*· *Գիւտ պատուական գաւազանի Սբ*· Աճամնին։ (*Սկիզբն վերջին պարբերութեան տողերն էլեփտերեն «Գրէպտէ է» կը կարդան*։

6. Թղ. 36*բ*· *Վարք երանելոյն Սիմէոնի Սիւնակեցւոյն*

7. Թղ. 48*բ*· *Յիշատակ վարուց և մահուան Սբ Հայրապետին Մահակայ Պարթեւի*։

8. Թղ. 55*ա*· *Յիշատակ է վարուց սրբոյն Յովհաննու Ոսկերերանին*։ Սկիզբն· *Մեծն վարդապետն տիեզերաց և արեգակն եկեղեցւոյ*։ (*Եւ նաև Թղ*. 152*ա*)

9· Թղ· 61բ· Յիշատակ վարուց Սբ հայրապետին Իսահակայ և Սբ վարդապետին Մեսրոպայ։

10 Թղ· 69ա· Յիշատակ աւերմանն Ամթայ· Սկիզբն Թագաւորն Պարսից Կուտ անուն։

11 Թղ· 72ա Յիշատակ կոտորելոցն ... յունաց։ Սկիզբն· ԲՃԿ թուականին առաքեաց։

12 Թղ· 75ա· Յիշատակ վարուց Ս· Յակոբայ Սրճոյ եպիսկ։

13 Թղ· 82ա· Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։

14 Թղ· 84ա· Յիշատակ Բժան վարդապետացն ոգոց առաջին և գլուխ Սուրբն Դոնեսիոս Արիսպագացին։

15 Թղ· 104բ· Վարք և յիշատակ Սբ հօրն մերոյ Ներսէսի վարդապետին։

16 Թղ· 122բ Նահատակութիւն Ըմբատայ ... Ի Թիֆլիս Հայոց։

17· Թղ· 129բ· Տաւն է ամենայն սրբոցն հնոց և նորոց։ Ասացեալ սրբոց վարդապետացն Ներսիսեան ի պատիւ ամենայն սրբոցն Ա՛յ հնոց և նորոց։ Սկիզբն Կաթուղիկէ եկեղեցի։

18 Թղ· 142ա· Տաւն է սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի և ամենայն երկնային զօրացն։

19· Թղ· 143բ· Պատճառք յաղագս երկնայնոցն դասուց· թէ ո՞րպիսիք են վառաբանութիւնք նոցա, և թէ ո՞յք են առաջին վերջինք և միջինք։ Սկիզբն· Իսկական էութիւն և գերարուն ած·ութիւն։

20· Թղ· 145ա· Տեառն Ներսէսի ասացեալ մաղթանք առ Հրեշտակապետն Գաբրիէլ և Միքայել և առ ամենայն զաւրս երկնաւորաց ինն դասուց· Սկիզբն· Արդ սպաղատիմք։

21· Թղ· 161ա· Պատմութիւն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։

22· Թղ· 165ա· Տաւն է Ներսէսի Հայրապետին և Խաղդա Եպիսկոպոսին։

23· Թղ· 168ա· Տաւն է Ամենասրբուհւոյ Ածածնին որ երիոյ ամաց տարին ի տաճարն։

24· Թղ· 175բ· Յիշատակ վարուց սրբոյն Գրիգորի Սկանչելագործին։

25· Թղ· 177բ· Գիւտ գրոյն Հայոց ի Բալու, Սկիզբն· Վարդապետն և աքանչելի այրն Ա՛յ· ճգնաւորն Մեսրոպ։

26· Թղ· 178բ· Ողբանք ... ասացեալ Մեծին Մովսէսի Խերթողին։ Ողբամ ցքեզ։

27· Թղ· 205ա· Աքանչելիք զոր արար սուրբն Մինաս։ Սկիզբն Արդ լուարուք զաքանչելիսն։

28· Թղ· 225բ· Տեսիլ Ս· Գրիգորի զոր հաւս ի վաղարշապատ քաղաքի ղիւրումն Մխածնի Որդւոյն Ա.յ· և դինուումն Սբ· Հռիփսիմեացն . . . ։

29· Թղ· 238ա· Սրբոյն Եփրեմի Խորեն Ասորոյ ասացեալ ներբողեան ի սուրբ Ստեփաննոսի Նախավկայն։ Ալէլուիա· Անդրանիկն Մարտիրոսաց։

30· Թղ· 260ա· Նաւակատիկք և Ճրագալոյծ է Հաւաչիառ Մինդեան և Յայտնութեանն Քի Ա.յ մերոյ։

31· Թղ· 260ա· Պատճառ Ճրագալուցի Ծննդեան և յայտնութեան Քի Ա.յ մերոյ· Ալէլուիա, Խորհուրդ աւուր Ճրագալուցիս։ (Տե՛ս բնագրոյ)։

32· Թղ· 290ա, Վերադարձումն Յովաննու Ոսկերերանին յաթոռն իւր Կ.պոլսոյ։

33· Թղ· 327բ· Վարք և յիշատակութիւն Սբ հաւրն մերոյ և Լուսաւորչին Մեսրոպայ Վարդապետին։

34· Թղ· 339ա· Տաւն է Վարագայ Սբ Խաչին։

35· Թղ· 346ա — 352բ· Վարի լուսանցքներն հետևեալ ոտանաւոր բանք·

Հիւրասէր ծեր նազելի,
Ոներ ամուլ կին մը բարի
Որպես զգառն իր անմեղուկ,
Որդիս ուներ Բ. մանուկ
Կարդայ եւ գիտ զառաքինին,
Գառտեմարտեաւ ընդ միշտ ելիր,
Գառտեմարտն ճակատուն,
Նյեալ երթայր կաղ կաղ ի տուն,
Արեգական նըման լուսաւ,,
Թեպետ եկաց չատ ի զնդաւ,

Ջենոյր խաւսուն գառն ի սեռի
Էր ծիծաղկոտ եւ առաքինի· —
(Աբրահամ·)
Կայր սպասողին յառջեւ նեզուկ,
Միևն էր յիմար միւսն խաբուկ։
(Իսահակ)
Որ կին հաւ զիւր քեռորդին
Բայց կարճեցաւ ջիլն ի տեղին·
Յաղթահարեալ եղեւ նըկուն,
Աբջաւ ոչխարն իւր խա՛յտ պատուն։
(Յակոբ)
Եղբարս ուներ մետասան,
Շատոց ի սովն հաւ պեղան (1)։
(Յովսէփ)

(1) Բազդատ. առանձաւոր բանիս տեղոյն հետ, որ յառաջ բերաւած են, Յուցակ Հայերէն Ձեռագրաց կայսերական Պատենադարանին ի Վիեննա Հաւատ Առաջին, Տետր Ա· Տպգ· Վիեննա, եր· 26բ· Եւ Յուցակ Հայերէն Ձեռագրաց ի բուրիա, (Ար էրբն) Հաւատ Առաջին, Տետր Բ· Վիեննա Կեսարիոյ, Տպգ· Կ· Պոլիս 1893, եր· 69։

56. Թղ. 380բ. Սկիզբն արարչութեան Աստուծոյ. Ա. աւր. (Տե՛ս ՀՆՆԼ ՀՅԵՐՈՒԹ ԱՒՐ.):

57. Թղ. 402ա. Ըստ կարգի աւուրցն արարչութեան վեցաւրեացն այսաւր զատիկ է և տուն յարութեանն Քի Ա.յ մեր, Սրբոյն Եղիշէի Հայոց Վարդապետի ասացեալ ի յարութիւնըն Քի Ա.յ Սկիզբն. Կանխագոյն Մարիամ:

58. Թղ. 405բ. Վարի լուսանցքը հետևեալ ոտանաւոր բան.

կայր քրր մի աղքատիկ,
Ծքնաւոյս չունէր ոչ մեկ
որիկ,
ոչ էր քնոյ սքսքրկիկ.
Վեառն կենայր մերկ ոտ
բոպիկ:
(Մելչիսեդ)

59. Թղ. 405բ. Ըստ կարգի աւուրց յարութեանն Քի Ա.յ մերոյ. Այսօր մեռելոց է, Սկիզբն եւ արդ գիտելի է:

60. Թղ. 411ա. Վկայաբանութիւն սրբոյն Վահանայ Գողթնեցւոյն:

61. Թղ. 418բ. Ցրոյն Յակոբայ Սրմոյ եպիսկոպոսին, ոսոցեալ ի թերահաւատութիւն Թուամայի Առաքելոյն: Սկիզբն. Յորժամ յարեաւ Հովիւն քաջ ի մեռելոց:

62. Թղ. 435բ. Վկայութիւն սրբոց իչխանացն Սահակայ եւ Համազասպայ բ. եղբարցն:

63. Թղ. 440բ. Պատմութիւն անողորմ Պետրոսին. Սկիզբն. Էր այր մի մեծատուն:

64. Թղ. 447բ. Յիշատակ տեսլեան Սբ Վարդապետին Յովաննու Պաւնեցւոյն: Սկիզբն. Պատմեաց մեզ:

65. Թղ. 469ա. Յիշատակ կատարելոցն ի Պարսից յաստրիս: Սկիզբն. Յորժամ խոսրով արքայն Պարսից:

66. Թղ. 475ա. Մեծին Եւսեբիոյ պատմագրի ասացեալ ի համարձումն Քի Ա.յ: Սկիզբն. Վայելուչ է մեզ ճառել:

67. Թղ. 485ա. Տաւն է երևման Սբ Խաչին:

68. Թղ. 510ա. Յիշատակ է Աշոտայ Բագրատունոյ:

69. Թղ. 552ա. Յիշատակ վարուց Կիրակէի եւ Ուրբաթու:

70. Թղ. 557ա. Վկայաբանութիւն Յովսեփայ նոր վկային Քի Ա.յ:

71. Թղ. 540բ Նահատակութիւն Տն Ստեփաննոսի Եպս Սեբաստիոյ. Սկիզբն. Յամի ՊԼԶ Թուականին:

72. Թղ. 544ա. Նահատակութիւն կաթողիկոսի Աղթամարայ: Սկիզբն. Զհայրապետն մեր զՏէր Զաքարիա:

53· Թղ. 548ա· Տաւն է երկոտասան Առաքելոցն Քր։

54· Թղ. 560բ· Տան է ծնընդեան Յովաննու Կարապետին։

55 Թղ. 571ա· Յիշատակ Ներսէսի Լամբրաւնեցւոյն, որ է որդի մեծի իշխանին Օշնի։

56· Թղ. 594ա· Նահատակութիւն սրբոց Վարդանանցն ի Պարս։

57· Թղ. 598բ· Պատմութիւն Յովաստիայ և Բարաղամու, Սկիւբն. Արդ ի մարդ եղանելն Այ բանին ընտրեաց զաշակերտան։ Վէրջ. Զոր ես Աստ (=Աստ) մեղաւոր ծառայ Այ բազում աշխատութեամբ և ջանիւ, փոքր ի չատէ ծայրաքաղ արարի, և թարգմանեցի ի Հայ բարբառ, ձեռամբ իշխանի մերոյ պատուաւորի . . . ։

Տ. Վ. Պ.

ՅՕՂՆ Ի ՎԱՐԴԻՆ

1	2
Երիւնափողիող	*Կաւ քէ երկի՛ն*
Է՞ր այդ ցօղ	*Է թախած*
Թերթոց վերայ	*Մէջ իւր գրկին*
Կ'երերայ,	*Դեռաբաց՝*
Դեղահիւսակ	*— Թերցոց բոսոր*
Ի պըսա՞կ	*Մեղմօրօր՝*
Պընձել ըզվարդ	*Մեղմել պաղուք —*
Մեղմազուարթ։	*Ցօղ պաղուկ։*

3	4
Կաւ վարսագեղ	*Ո՛չ, սիրավառ*
Կոյս շըրեղ	*Ոսկեթել*
Շաղով աչա՞ց	*Աստղունին ի վար*
Է թրջած,	*Են կաթել,*
Չի դիտէ զվարդ՝	*—Երանւուհս*
Ցօ՛ղազարդ,	*Քնով յաւհս*
Մի՛շտ սիրախանձ	*Ցօղ ցօղ թերթոց*
Ի նախա՛նձ . . . ։	*Մարիլ ի ծոց։ —*

27 Մայիս 1897
Կեսարիա

Ե. Տ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

ՀԱԼԷՊԻ ՎՐԱՅ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Կարծեմ Ցարգոյ ընթերցողները կը յիշեն թէ ասկէ առաջ Հալէպի ազգայնոց վրայ համառօտ ծանօթութիւն մը տուած էի՝ այս անգամ կ'ուզեմ քաղքիս բնակչաց, արտադրութեանց և սովորութեանց մասին համառօտապէս տեղեկութիւն մը տալ և կարծեմ օգտէ զուրկ չպիտի ըլլայ, քանի որ մեր լրագրաց մէջ ամեն օր նոյն իսկ անուններին մեզ անծանօթ եղող գիւղերու կամ գիւղաքաղաքներու մասին մեծամեծ էջեր լեցնող տեղեկութիւններ անպակաս են։ Ընթերցողները ճանձրացնելու առթիճան զոր և երկարօրէն գրելու նպատակ չունենալով և արուեստիք ծանօթութիւններն ալ Սիւրիական կամ աւելի ճիշտ Արաբական մեծ քաղքի մը վերաբերելով՝ կը յուսամ որ կարդացուելու բաղդին կ'արժանանայ։

Քաղքիս հիմնադրութեան թուականը թէպէտ ծանօթ չէ՝ սակայն չատեր Հալէպը ամենահին քաղաքներու շարքին կը դասեն. փողոցներու խիստ նեղ և օձաձև չինուածքը, առհասարակ տանց բերդերու նման բարձր և ամուր պատ ունենալնին, և քաղաքը մասամբ պարսպապատ ըլլալովը ներս մտնելու համար հին չատ հին երկաթապատ, հաստատուն դռներ ունենալը նշաններ են թէ քաղաքը բազմադարեան հնութիւն մը ունի. թէև կարելի չէ՝ մեզ պնդել թէ այս նշանները հնութեան անվրէպ ապացոյցներն են։

Հալէպի կլիման ամառը չատ տաք ընելով ձմեռն ալ գրեթէ երբէք ձիւն չտեղար, սակայն կարծուածին չափ վատառողջ չըլլալէ զատ առողջարար ալ է. հնմանիր երբէք այն քաղաքաց որոնց մէջ բնակիլը ամառը անհանդուրժելի ըլլալէ զատ վնասարեր է նաև։ Ջուրը՝ Ասինթ ասէն եկող գետակ մըն է, և ասկէ զատ ջուր չունի, ի բաց աւեալ մի քանի փոքրիկ աղբիւրներ որք քաղքէն բաւական հեռու են. յիշեալ գետակը չատ պղտոր ըլլալով հանդերձ խմելու ալ չատ անյարմար է, որովհետև այս ջրէն խմողները (ընդհանուր տեղացւոց կարծիք) Հալեպ հիպոնը կոչուած գէշ վիրքը կը հանեն որ թեղհ իղական տեսին մեծ պատուհասն է, պի չատ անգամ գեղեցիկ դէմքերու տեսման

պատճառ կ'ըլլայ, ուստի այս պատուհասէն ազատելու յուսով և առողջարար ջուր խմելու նպատակաւ հարուստները՝ հետ ու աղբիւրներէ տակառներով ջուր բերել կուտան և ամանք ալ տանց մէջ յատուկ ջրհորներ չինելով անձրևի ջրով կը լեցնեն, վերջապէս ջրայ մասին չատ աղքատ քաղաք մ'է

Բաղքիս ընդհանուր բնակչաց թիւը 130,000 հոգի կը հաշուեն, որոնց 100,000ը Արաբական ցեղէ մահմետական, 25,000ը քրիստոնեայ և 5,000ը հրեայ են Այս հաշուէ դուրս է վերջին տարուան մէջ չրջականերէ հոս գաղթող 8–10,000 այլ և այլ գաղթականներ, նոյնպէս խիստ աննշան թիւ մը կազմող Եւրոպացի վաճառականներ Հոս գրեթէ ամեն ազգէ քրիստոնեայ կայ, որոց մեծամասնութիւնը պապական են Ընդհանուր քրիստոնեայ եկեղեցեաց թիւնը 14ի կը հասնի, որոց մին մեղ Հայոց կը վերաբերի Քրիստոնեից եկեղեցիները գրեթէ ամբողջ մէկ թաղի մէջ գտնուելով նոյն թաղին անունն ալ իրաւամբ Սալիպիյէ՝ այսինքն խաչի թաղ կանչած են Արաբերէն, և այս թաղը բոլորովին Քրիստոնէից կ'վերաբերի։

Մահմետականները ունին 150ի չափ մզկիթներ, որոնցմէ իւր հոյակապ չինուածքով և մեծութեամբ նշանաւոր է Ջաֆէրիյէ ճաֆէի կոչուածը, որու մարմարիոնով սալայատակուած ընդարձակ գաւիթը դիտողը կը հիացնէ։

Բաղքիս ընդհանուր լեզուն Արաբերէնն է, թէ չուկան թէ տուները վերջապէս ամեն ուրեք Արաբերէնէ պատ ուրիշ լեզու չլսուիր. առանց այս լեզուին տեղեակ ըլլալու եկող օտարականներ մեծ դժուարութիւններ կը քաշեն իրենց նպատակը հասկցնելու արաբացոց ժողովրդեան, մինչև որ 5–6 ամիսներ անցնելով քիչ չատ արաբերէն սորվին, որ բաւական դժուար է, որովհետև արաբերէնը ինչպէս ծանօթ է արեւելեան և իզականի յատուկ կանոններ ունենալով մէնջ մը և էրիկ մարդ մը հետ խօսուելիք լեզուն զատ զատ է։ մէկդի թողլով կարգ մը բառեր և յարգանաց վանդակաւոր ձևերը, զոր ամեն ոք ըստ իւր հաճոյից կը գործածէ և անվարժը կը շուարի անոնցմէ ո՞րը սովրելու։

Հալէպի ընդհանուր ժողովուրդը թէ Տաճիկ և թէ Քրիստոնեայ գործուեններ և աշխատասէր մարդիկ են, ամեն ոք իրեն յատուկ գործով մը կ'զբաղի, հետևաբար տարուտանին դիւրութեամբ ճարելով բարօրութեամբ կ'ապրին. քաղքին մեծութեան հետ բազդատելով աղքատ մուրացիկներն ալ չատ քիչ են։

Գաղքիս տեղական բերքերն են գլխաւորապէս ցորեն, գարի, բուրդ, մետաքս, ոչխարի մորթ, կանեփ, ծիխտապուղ և արդար իւղ. հռչակաւոր են նաև իւր արարական արտիւղ թաց նըժոյգները, ուղտերն ու արջառները։

Վերոյիշեալ բերքերը մեծաւ քանակութեամբ Խակէնտրեան նաւահանգստին միջոցաւ, որ 3 օրուայ ճամբայ է Հալէպէն, Եւրոպա և Ամերիկա կը ղրկուին օտար և տեղացի վաճառականաց կողմէ. մանաւանդ բուրդը տարէ տարի 2 ½ – 3 միլիոն օխա կ'արտադրուի. սակայն այս տարի ոչխարի տէրեր մեծապէս պիտի վնասուին, քանի որ Ամերիկան չգիտցուիր ի՞նչ պատճառաւ 0/0 50 մաքս դրած է բուրդի վրայ, և այս պատճառաւ հոս գիներն խիստ ցած են բաղդատմամբ անցեալներուն։

Հալէպէն Եւրոպա փոխադրուած ապրանաց փոխարէն անկից ալ կ'ստանայ ամեն տեսակ կերպասներ, կտաւներ, մանած, տեղական ալաճա չինելու ներկեր, վերջապէս ամեն տեսակ Եւրոպական ապրանքներ որոնք տեղական և շրջակայ քաղաքաց պիտոյից բաւելէ յետոյ չատ հեռու տեղեր, ինչպէս Մոսուլ, Տիարպէքիր, Վան, Պիթլիս ևն կը ղրկուին յատուկ կարաւաններով, և ահա այս է պատճառը որ Հալէպ Սիւրիոյ ամենէն մեծ վաճառաշահ քաղաքն է։

Տրուած վաճառականական հանգամանք տեղեկութիւններէ յետոյ չմոռնանք հոս յիշել առևտուրի կեդրոնն եղող իւր բազմաթիւ և հոյակապ խաները, որոց մէ չատեր իրենց հնութեամբ հանդերձ ուշադրելի չինքեր են, ինչպէս Վէզիր խան, Սապօն խան ևն։

Գաղքիս ընթացքի դրամները ուրիշ տեղերէ բոլորովին տարբեր ըլլալով յիշատակութեան արժանի են, մանրուքի համար Պարա և դաւառներ ½, 1, 2 ղուրուշնոց արծաթի դրամներ կը գործածուին, մինչ հոս ասոնցմէ բնաւ չգտնուելով 22 ½, 45, 90, 110 փարանոց և 3, 4 ½, 9 ղուրուշնոց հին մեծակշռ դրամները հրապարակ կ'գտնուին։

Ամերիկան գործոց մէջ չափերն ալ խիստ տարբեր են իրարմէ, ամեն ապրանք իրեն յատուկ չափ մը ունի, դոր օրինակ շաքարի սահմանը 2 է իսկ բուրդի սահմանը 2 ½ օխայ; նոյնպէս ամեն ապրանքի համար լիրայի գինը տարբեր է։

Գալով դրօսատեղեաց. Հալէպի մէջ օրինաւոր ոչ թատրոն և ոչ ալ սրճարան կայ, հետևապէս ժողովուրդը ամեն տեսակ

զուարճութիւններէ և հաճոյքներէ բոլորովին զուրկ է. իրենց ամենէն չատ յամախատ զբօսավայրը Հավրա կոչուած տեղն է, զոր սակայն չարժեր զբօսավայր կոչել։ Հավրան լայն փողոց (լայն կ'ըսենք օրովհետև հոս գրեթէ ամեն փողոց նեղ է. կան փողոցներ որ հապիւ հոգի մը կը տեղաւորեն) կամ խաւղի մ'է, որու մէկ կողմէն կը վազէ պզտիկ առուակ մը զոր, ինչպէս ըսինք կը խմեն, մեռնող կովերը ընդարմակ արտեր՝ որոնց մէջ ձիեր կ'արածուին և ահա այս արտերու եզերքը բացօդեայ տեղեր աթոռներ չարուած են ուր ամէն իրիկուն կը դիմեն խաւռներ բազմութիւն մը արանց և կանանց, ծերոց և տղայոց, և ի՞նչ ընելու կուգան հոս, անշուշտ պիրար դիտելու կամ քաղքիս յառաջկայ եղող անապատ փոշոյն մէջ թաթխուելու. ինչ և իցէ, ամէն իրիկուն՝ մանաւանդ Նիրակի՝ ամեն ազգէ և տեսէ խաւռն բազմութիւն մը հոս կը ժողովուին, իրարու քով խիտ առ խիտ նստելով, հապիւ թէ կը նսեմին հինաւուրց աթոռներու վրայ, իսկոյն սրճարանապետը կամ կարսոնը, դի երկուքն ալ միևնոյն անձն են կուգայ նստողին հրամանը առնելու հարցնելով արարերէն. Ըչըպլո՞ – Նէֆէս, անկէ հըլվէ մըրո՞. այսինքն նարկիլէ կ'ուզէ՞ք, սուրմը չաքարո՞վ թէ զուտ, յաջորդին կամքը հասկնալուն պէս կը վազէ իր հիւղակը և քիչ մը յետոյ կը վերադառնայ ձեռքը մեծ մեր սափորներու չափ սրճաման մը և միւս ձեռքը վրայի վրայ չարուած և տաքնոք մեր պապերու դործածած փոքրիկ ապուրի թասի ձևով 8 – 10 սրճի դաւաթներ, և կ'սկսի ամենէն ծայրը նստողէ ուխտ տասն յաջորդին լեցնել տալ կ'սպասէ որ անոնք խմեն և անոնք խմելէն վերջ կը ժողվէ և առանց լուալու ձեռքը գոնուղ սրճամանէն դարձեալ կը լեցնէ և կուտայ չխմողայ և այսպէս կը շարունակէ մինչև վերջ. այս պարտականութիւնը կատարելէն վերջ դարձեալ հիւղակը գառնալով մէկ ձեռքը ջրով լեցուն գաւդ մը և միւս ձեռքը կրակ մը առնելով կուգայ նստողայ մօտ և կ'սկսի սօսալ հա՛ջ, ջա՛յ այսինքն կրակ, ջուր, վառելիք սիկառներն այս կրակէն կը վառեն և ծարաւի եղողներն դոյն գլուխնին անկելով իրենց ծարաւը կ'անցնեն։

– Այս և այս տեսակ ուրիշ սովորութիւններ Թէպէտ մինչև հիմա չարունակելու վրայ են, սակայն ատկաւ առ ատկաւ վերցուելու վրայ գտնուելով անշուշտ օր մը ամբողջովին պիտի վերցուին։ Սակայն զարմանալին՝ որու նմանը կարծեմ տեղ մը չկայ, ամէն հատակէ դեւատան և ծեր կանանց մանաւանդ գլխաւո-

բա պէս Հրէ ուհիներու գալ և այս սրճարաններու մէջ նարկիլէ ծխելնին է, ինչպէս շատ երիկ մարդեր գլանիկ ծխելու ծայրա-յեղութեան հասնելով ընչեաւէ կը կոչուին, նոյնպէս ալ հոս կարգ մը կանայք սոյն նարկիլչին ընչեաւէն են, առանց քաշուե-լու թէ սրճարան, թէ տուն և վերջապէս ամենուրեք կը ծխեն, իրենց համար անմոռանալի սովորութիւն մը դարձեր է այս որմէ չատերն ալ դժգոհ են. սակայն ինչ օգուտ, անգամ մը վարժուած են չեն կրնար ձգել, միա՞ք որ մեր ազգին կանանց մէջ այսպիսիները շատ հազուագիւտ են։

ՕՀԱՆ. Պ. ԹՈՒՐԱՊԵԱՆ

ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՍՐՏԱՁՈՐԻ ՄԷՋ

ՀԱՏՈՒԱԾ ՅՈՒՇԱԳՐԱՅՍ

Յունիսը 15 որ մխայն անցեր է. քննութիւնները աւարտած են. Սանասարեան սանները անհամբեր կըսպասեն ամպաստանե-րու գալուստին. Զօրեքշաբթի առաւօտ մ'է, երբ հարիւրաւոր եզներ կը պաշարեն վարժարանի լայնարձակ դուռը. տղայք, մը-րանարնակ ժողովուրդի նման, իրենց պէտքերը, անկողին, բարձ, մահճակալ կը կրեն, և ի՞նչ աշխուժով, կարե՞լի է նկա-րագրել։ Կէս ժամէն վերջ ճամբան ենք թմբկով և պարով։ Եւ խաղ կ'ընենք, ծափ կը զարնենք. ոչ անօթութիւնը և ոչ հե-ռաւոն քալելը կրնայ մեզ ատելի ներկայացնել. Սրտաճորը որ դեռ հեռի կը թուի. Ծարաւ ենք, աղբիւր կայ բայց դաւաթ չկայ, ևայնպիսի աղբիւր մ'է որ երկու կանգուն չուան պէտք է ջուր հանելու համար։ Երկայն խորհելը օգուտ չըներ, երկաթ գտանք և գլխարկ մը մեզ ջրեցին։ Տղայք հոսան առած են Սրտա-ճորին ուր դիւցազնական ձիգ մը կ'ընեն չուան հասնելու։ Երկո՛ւ քայլ, և ահա ճոր մ'որ կը հասնի և դաշտավայր մը կ'սկսի։ Զորին բերանէն վազած ջուրը երկուքի կը բաժնուի, մին մէկ բլրակին, իսկ միւսը մորքրին տարօրոշը քերելով։ Կ'սկսինք ցից պատրաստել և վրաններ բարձրացնել ճիշդ արօտավայրին կուրծքին վրայ, այնպէս կը կարգադրուին այդ կատարեալ տուներն որ չուրջ պատեն ըղարանը։ Ըղարանը միտս մ'է 1 ½ մեղր խոր և 17 մեդր երկայն, ամէն տեղ հաւասար խորութիւն չու-նի, տեղ տեղ քիչ է։ Աւաւօտները, քանի մը ժամ ղով օդին, կը կարգանք և կը գրենք, յետոյ գանգակ կը զարնէ ըղալու։ Եւ իրաւունքում մ'է որ կ'ըսկսի 50 - 60 աղայք, ըղվարախկ հապճեպ կը նետուին ջրին մէջ։ Աստուած իմ, ատ ի՞նչ չարա-

ճմի լսիտաներ. մին տիկ է կապեր թիկունքներուն, մին լողվարիկն է ուռեցուցեր, ուրիշ մը մկջտեղ կեցած է և չուրջը ոմանք ոտնիվեր նաւակ են կազմեր, հազարումէկ խաղ, ո՞րը չիչեմ։ վա՛յ անփորձին. անասելի չարիք կը բերեն գլխուն։ երիցս զանգը կը զարնէ. լողամոլին համար վերջինը մահացու է։ կըլնա՞յ թողուլ պաղ ջուրը և գովաչուիլ հովը։ Ու սուտաններ փաթթուելով վրանը կը վաղնիք ակռաները իրէ՛ն իրէ՛ն ընելով։ Մէկ օր չէ, երկու օր չէ. երկու ամիս չորանա՛կ այսպէս։ Աւելի ըլլալով՝ քանի մ՛օրն անգամ մ՛ալ ձորն ի վեր կ՛երթանք միասով և վարուձգով՝ որ էրզրումի համար հազուագիւտ բան մ՛է։

Եւ միթէ աւելորդ չէ՞ նկարագրել այդ գեղեցիկ վայրին հրապոյրն ու գեղեցկութիւնը, երբ կարնոյ պէս ձմեռնային երկրի մը ձիւնապատ լեռները իրեն վրայ կը գուրգուրան յար, պինք կը լանամեն իրենց կուրծքէն բղխող ջուրովը, վերը խաչփայտի լեռները օդակաձև պտոյտներ կ՛ընեն իր կողերուն վրայ և նոր նոր ակներ կուտան իրեն։ Առաջին անգամ նեղ ձորին բերանը գացողը կը սոսկայ. որովհետև ծակ մ՛է և իր մկջ ինչե՛ր ունի. սոկայն մի վախնաք բան չի կայ, գաղտնիքը բնակարան է միայն ուր, տպայոց ներկայութեան, բան չի մնար ասպարէզ. թերևս խոշոր գաւազաններէն կամ նոյն իսկ աչակերտներէն կը վախնան։ Է՛հ, աչակերտներն ալ չատուր են.

Դովելի է Յանատարեան վարժարանը որ գիտէ սաներուն ճաշակն աղնուացնել և հետաքրքրութիւնն արթնցնել։ Հապա տղաք, ի՞նչպէս չարքաշութեան կը վարժին, ի՛նչ կորով և համարձակութիւն ի՛ըստանան այս մարմնամարզական խաղերով պաեղուրդ է բացատրել։

ՑԱՐՈՒԹԻՒՆ ՇՈՐՆԻԱՆՑ

ԱՌՏՆԻՆ ԳՈՐԾԵՐ

Ոչխարաց խնդիրը. — Դպրոցական հարցաքննութիւն. — Թափրան։

. . . Խմբագիրը. — Բաւական չէ, կարծեմ, նպատակ մ՛ունենալ, անշուշտ լաւ նպատակ մը, հարկ է նաև այդ նպատակին հասնելու ապահով պայմաններն ընտրել։ Այդ պայմաններն են տեղւոյ, ժամանակի և միջոցներու յարմարութիւն, կամք և գիտութիւն։ Տոհմային դժբաղդութիւններէն դլխաւոր մի պատճառն է, ըստ իս, անխորհուրդ եռանդ մ՛ևս հապճեպ գործունէութիւն մը։ Այս պահուս ամեն հայու առաջին կամ իրական նպատակն է սրբերու խնամատարութիւնն։ Միթե չկայ որ չցաւի,

դրիչ չկայ որ չգրէ, բերան չկայ որ չղրայ բազմաթիւ որբերու խղճալի վիճակին վրայ։ Սակայն ի՞նչպէս, ո՞ւր և ի՞նչ միջոցներով պարտ է կատարել այդ որբատիրական նպատակն։ Անհատական խնդիրներ որ դիւթէ ատրիճ մի վեր կ'ծնեցնուին ու կ'ծնցնուին և հագիւ կիսկատար, տարտամ և տեղ տեղ երևակայական լուծում կ'ստանան։ Ի սկզբան պաշտօնական որոշումներու մէջ ջնջեցան այլ և այլ ձևեր կ'առնու։ Ազգ. Պատրիարքարանը այնպէս կ'տնօրինէ նախ որ հաղարաւոր որբեր մայրաքաղաքը փոխադրէ և յատուկ որբանոցներու մէջ տեղաւորէ կամ ուներևորներու որդեգրել տայ։ Եւ իսկոյն մի քանի Առաջնորդներ այդ պաշտօնական որոշման հետևելու կասկածամբ բարձրաձայն կ'պահանջեն որ քանի մը հազար որբեր ալ իրենց դրկեն։ Ընդհանրապէս օրագիրները կ'քաջալերեն այս խորհուրդն և որբերու փոխադրութեան մէջ անանց երջանկութիւնը կ'նշմարեն։ Յանկարծ մի քանի դրիչներ այդ որոշման անպատեհութիւնները մատնանիշ կ'ընեն, և գեղեցիկ խնդիրը նոր կերպարան մը կ'առնու։ Յարմարագոյն կ'գտնուի որբերն իրենց բնիկ երկրին մէջ յատուկ որբանոցներու և կամ վանքերու մէջ խնամել։ Այս խորհուրդը բանաւոր կ'գտնէ կեդրոնն և ըստ այնմ հրահանգներ կ'ուղղէ գաւառները։ Բայց այս յարափոփոխ տնօրէնութեանց ժամանակ որբերը կ'տառապին, անօթի, մերկ կ'մափաղին և ամանք կ'մեռնին եղեր, փոյթ չէ։ Բայց այս միջոցիս՝ եթէ որբերը խնամելու, որբանոցներ հիմնելու և մատակարարելու միջոցները չեն խորհուրդ, փոյթ չէ, բաւական է որ թղթերու վրայ ծրագիրներ գծուած են. բայց եթէ միսիոնարներ եղնեն և իրենց հաստատութեանց մէջ պատսպարել ու կրթելու ձեռնարկեն ընկճեալ որբեր, ահա կարգ մը ջերմեռանդ հայեր կը դայթակղին և կ'գոչեն — մեր որբերը բողոքական սիւսի ընեն միսիոնարները — և ի պաշտօնէ կ'խնդրուի այդ Աւետարանի պաշտօնեաներէն որ հայ որբեր իրենց կրօնքէն և լեզուէն չօտարացնեն։ Եւ մեմ իրաւունք ունի՞ն այդ պահանջումն ընելու այդ բարեպաշտ մարդիկ, քանի որ միսիոնարն ալ կարծէ բարեպաշտական գործ մը կատարել փողոցները չրջող որբեր հաւաքել ու կերակրելով։ Յակաւին հայք չեն համոզուած, այնքան դառն փորձերէ եաև՝ որ քրիստոնէութիւնը չէ հատած այն բարձրութեան ուսկից ամեն եկեղեցի իրրև Քրիստոսի եկեղեցի նկատէ, և կրօնական դաւանութեանց մէջ խոիր չդնէ։ Բայց ատոր՝ մեզ մի հիմնարկութիւն իր յատուկ կանոնն ունի,

օրմէ չէ կարող չեզրել, առանց իր հիմնական սկզբունքէն չեզ-
լուս։ Բայց եթէ չէս ուզեր որ հայ որբեր օտարոտի բարախներուս
մէջ ապաւէն վնտռեն, դո՛ւս հայ, դո՛ւս հայրենի կրօնիդ հարա-
զատ զաւակ, ինչո՞ւ համար այդ որբերուս համար դուս ինքդ-
պէտք եղած խնամքը չես տանիր։ Մինչև ցայսօր քանի՞ որբանոց
բացին հայք, և բացուածներն՝ ի Կիպրոս, ի Նիկոմիդիա, ի
Պրուսա, ի Կեսարիա, ի Վարագայ և այլուր, մանաւանդ նոր
նախաձեռնութեամբ, ինչ միջոցներով կ՚քաջալերուին։ Եթէ մի-
սիօնարներ՝ զաւառներն որբերուս համար չչխատէին, տարա-
կոյս ունիմ որ այդ մի քանի հայ որբանոցներն ալ հաստատե-
լուս հոգ տանէին մերայինք։ Աղէկ որ Վանայ ամերիկացի միսիո-
նար Պ. Ռէյնոլտս մ՚ելեր Վարագայ վանքն իր մատակարարու-
թեամբ որբանոց ընելուս առաջարկեր է, որ Առաքնորդին հետ
մի քանի անձեր թոթուեր են իրենց թմրութիւնն և նոյն վան-
քին մէջ որբանոց մը հաստատելու որոշում տուած են։ Փա-
փաքելի է որ ոչ միայն յարմար վանքերուս այլ զաւառական
գլխաւոր քաղաքներուս մէջ, այդպիսի որբանոցներ հաստա-
տուէին և բարեսէր անձեր ամեն կողմէ նիւթապէս աջակցէին
այդ հիմնարկութեանցս։ Արդէն Վարագայ վանուց նորակազմ
Հոգաբարձութիւնը կրճատ ըրած է ազգայնոց որ եթէ կուզեն
որբեր ղիւրագին պահել և զանոնք հայութեան օգտակար ան-
դամներ ընել, կրնան մէն մի որդեգրեալ որբի համար տարե-
կան հնգական ոսկի վճարել. 3 ոսկի ուտեստի, 1 ոսկի զգես-
տի և անկողնի և 1 ոսկի կրթութեան ծախուց համար։ Հոգա-
բարձութիւնը կ՚խոստանայ ոչ միայն որդեգրող բարերարին
ներկայել որդեգրին վերաբերեալ տեղեկագիրն, այլ և տարե-
կան հաշուետոյն Աղդ. Պատրիարքարանին։ Այս հաշիւը ցոյց
կ՚տայ թէ որքան աժան գնով կրնայ խնամուիլ որբ մ՚իր բնիկ
հողին վրայ, մինչդեռ անտանելի ծախքեր, դժուարութիւններ
և վտանգներ կրնան ծագիլ եթէ որբերն մեր կողմերը փոխա-
դրուին։ Բայց որբանոց հաստատելու միաւսիրական մարմինը
թոյլ չտար ոմանց ի նկատի առնուլ թէ այս կողմերը՝ թող թէ
խոսքով, դրամով իսկ չհաստատուիր որբանոց, ենթադրելով որ
դրամն անդադար պիտի հոսի, այլ ձեռնհաս մատակարարու-
թեամբ և գանազան պարագայից դիւրութեամբ։ Ուստի այն
ընկերութիւններն որ որբանոց անուամբ, և քաղքիս մէջ
Ներքնեան անուամբ, հաստատուած է, —անշուշտ մեր Առաջնորդ
Հօր յատուկ ծախիք մատակարարուելու պայմանաւ — թէև կը

լսեմ որ հանգանակութեամբ պիտի բացուի, — այդ ընկերութիւնները, կ'ըսեմ, կրնան տարուէ տարի իրենց հաւաքած դրամարին համեմատութեամբ որքեր պահել Կիպրոս, Վարագայ, Կեսարիա, կամ նոր ի նորոյ բացուելիք դաւառական որթանոցներու մէջ, և այսպէս իրենց առաջադրեալ նպատակին աւելի դիւրին, աւելի դիւրագին, աւելի օգտակար կերպով հասնիլ։

Այսպէս նաև կ'դադրին այն գանգատներն որ ի պաշտօնէ և օրագիրներու միջոցաւ կ'լսուին միսիոնարական թևարկութեանց և մարդասիրութեան նկատմամբ, գանգատներ՝ որ, ըստ էս, բոլորովին անչնորհ են, վասն զի այս անչնորհ դարուս մէջ, որ մեզ համար կրնայ օրքեան դար կոչուիլ, ընտրութիւնն ալ, ինչպէս ձեր մի խմբագրականին մէջ վաղուց գրած էիք, շահագործելը դրութիւնը տեղ տեղ կ'դործածուի։ Եւ այս շահագործութիւնը, պէտք է խոստովանիլ, այնքան ծանր չէ որքան այն որ հայ գաղթականներու Միսերիոյ ճամբան կ'ցուցնէ։ Եւ իրօք՝ Կովկասէ հասած նամակէ մը կ'իմանամ թէ հայ գաղթականներ թափուած են Ս. Չայրաղետին գլխուն և իրմէ պատսպարան կ'խնդրեն։ Տեղական կառավարութիւնն անոնց համար իրրև բնակութեան տեղ չէ թէ Էջմիածին կամ Կովկասու որ և է կողմն յատմարագոյն կ'դտնէ, այլ Աստանհանեաց երկիրն . . . արդէն Էջմիածնի մօտ գտնուած Գայանէի վանքը Որբանոցը փակած է։

— Տեղւոյս բոլոր վարժարաններն իրենց հարցաքննութիւններն սկսած են։ Մի քանի կոզմէ հրաւիրագիր ընդունեցայ, իրաւ, սակայն չկրցայ ներկայ գտնուիլ։ Մեր ազգ վարժարաններն ալ դեռ կ'շարունակեն իրենց քննութիւններն, որոց արդիւնքն անշուշտ պաշտօնապէս պիտի հրատարակուի Հասարակութեան տեղեկագրի մէջ։

— Ի նպաստ Նեբռեեան Որբանոցի, որ պիտի հաստատուի, ներկայացում մը տուեցաւ Յունիս ամսուն 21 ին՝ Բէյի Թատրոնն, առաջնորդութեամբ Պ. Մ. Մնակեանի։ Տաճկերէն լեզուաւ Թատերգութիւնն էր Ռոբէրտ ոպէրնէլն։ Դերասաններն բարեխիղճ եռանդով կատարեր են իրենց դերերն անձնուիրարար։ Արդիւնքը բաւական գոհացուցիչ։

27 Յունիս ՍԻՍԱԿ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ

Ալլեղակ կոչնեք. — Մարդ կատակ մը կատակարարին բնութեան յայտարար նշանն է։ Մարդասէրն, ողբմածէրն, ուսումնասէրն, եթէ միանգամայն ունևոր են, իրենց կատակն կ'ընեն այնպէս որ հանրութիւնն անկից օգուտ քաղէ, մինչդեռ ինքնամոլ, ոխլատ ու մարդատեաց հարուստն, ոչ միայն իր մօտաւոր ժառանգները կ'զրկէ, այլև ծանր, երբեմն այլանդակ և միշտ անշահ պայմաններով իր կտակը կ'ընէ։ Իսկ արտակերպրոն բնութեան տէր մարդ մի՝ տարօրինակ կտակներու հեղինակ՝ միշտ ծագր ուծանակ եղած են։ Ինչ անուն տալու է այն կամ կատակարարին որ իր կնոջ կ'մուզուլ գումար մ'այս պայմանաւ որ կինն մարդու երես չնայի։ Ինչ հոգեոյ տէր անմ մը կրնայ լինիլ այն կատակարարն որ պատուէր կ'տայ կատակաւորին այս կամ այն վարդապետութեան հաւատարիմ մնալ, քանի' ծագրելի կ'դառնայ այն ոգեղ մեծատունն՝ որ կտակաւ կ'պահանջէ որ իր հարստութեան մի մասը վատնուի իրեն չքեղ շիրիմ մը կառուցանելու համար։ Իսկ քանիներ չուներու, կատուներու, ձիերու համար կտակներ թողած են, մոխանակ ողբմածիրական հաստատութեանց։

Մեր ալջ՝ տակաւին չէ զարգացած լիովին այն հանրասիրական զգացումն որով ունևոր կտակարար մը կրնայ անմեռնուն մը թողուլ իր ազգին ալջ։ Օրինաւոր վստահութիւնը լիովին տարբեր բան մ'է եսամոլութենէ, որ ընդունայն պերեզմանէն անդին և ապրելու համար աւազի վրայ արձաններ կ'կանդնէ։ Երբ արդեօք մեր մեծատունները պիտի սորվին իրենց կտակն, եթէ երբէք ըննն, իմաստութեամբ յօրինելու արհեստն։ Եւ կտակ մը ոչ միայն մահնատնէ եաք՝ այլև կտակարարին կենդանութեան ժամանակ կրնար դործադրուիլ, բաւական է որ կտակարարը տակմային բարերար մը կանդնելու աղնիւ վստահութեամբ վստաւած լինի։ Մեծատուններու ներկայ անտարբեր դիրքն դիւրին է դուշակել իրենց կտակներուն ամլութիւնը։

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Մ. ՄԱ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԱԶԳ

Ի նկատի Ն. Ս. ՄԱՄՈՒՐԱՑ Գատառական Պատ. Բաժանորդներէն որ քաղաքային իրենց բաժնեգիները վճարած դրկել Խմբագրութեանս: Ի դիտութիւն բաժանորդաց Խմբագրութիւնս կ'ընդունի Ամէն. թղթատոմսակ 20 հատը մէկ մեծիտի հաշուով, կամ փոխ-գիր տեղւոյն կամ կ. Պոլսոյ վրայ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Գրաստուին ստացած է

ՉԱՐԻՒՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ — Մեքիթեղեկ Եպիսկ. Մատթաոսեան — Տպագր. Պ. Անդոյ Քէշ. Փոխադրեան Կալց, 1896 — Գին 5 պարէզ:

ԵՐԷՐԳԱՏԻՆ — Ա. տարեան տեսիլ յաւուրց — Հեղինակ, Բրօֆ. Յ. Ալպարխիմ, Փարիզ. Մ. Կ. Դաւիթեան — Տպագր. Յ. Մատթէոսեան — 1897 — Գին 5 պարէզ:

ԺԱՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՈՅՑ — 1897 — Հրատարակիչ Նշան Կ. Գէրակէեան — Կ. Պոլս. գին 5 պարէզ:

Հրատարակուած է Մատենեան գրատան պրեզուցային և փոխադրատց ձրի կ'առաքուի:

Անձնք որ կ'փոխանակին իրենց երկերն Թերթիս մէջ յանձնարարած տեղեանց, պարտին եղեւոնական օրինակ խնդրագրեալ հասցնել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա. ՄԱՄՈՒԼԱՑ

Թղմիրի համար.	տարեկան	3 1/2	օրն. ֆրանք
» » Վէճամահալ		3	» »
Ապր վարժապետներու.	»	2 1/2	» »
Ս. Փոլսոյ եւ Փարր Ա.ինոյ	»	4	» »
» » »		2 1/2	» »
Ապր. վարժապետներու.	»	3	» »
Զուսատաւոլի համար	»	8	ըռ-պլի ֆրանք
» » »		4	» »
Եւրոպայի »	»	12	ֆրանք
» » »		9	»

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

Կ. ՊՕԼԻՍ —	Մեծ. Տիգրան Լփ. Ճիվիէկեան խմբագրատան ձեւոխե Շուխնէ Պազը Ալի նաամախ թիւ 20	
» —	Մեծ. Դշան Լճ. պէրպէրեան Էմի Ջաղաքչի. նաամախ թիւ 61	
» —	Մեծ. Սմբատ Գաւրեան Գալաթիք խան թիւ 16 պանճէ Գալաթ.	
ՄԱԳՆԻՍԱ —	Մեծ. Միքայէլ Լճ. Էրկանեան	
ԷՕՏԷՄԻՃ —	Մեծ. Տիրան Լճ. պէնեաէրեան	
ՍԱՄՍՈՆ —	Մեծ. Եղբայր Լճ. Մարքոսեան	
ՆԻԻԶԱ —	Մեծ. Յարգիս Լփ. Ասեանեան	
ՆՐՈՒՍԱԳԻՄ —	Պեր. Տ. Սահակ Եպսկ. Խադրեան	
ԳԱՀԻՐԷ —	Մեծ. կարապետ Լճ. Դաւսաարեան	
ՄԱՆՉՍԹԷՐ —	Մեծ. Տիգրան վ.արեան	
ՈՒԻՍՉՈՒՔ —	Մեծ. Գաւրիէլ Եճ. Տէօմէնեան	
ՊՕՍԹՕՆ —	Մեծ. Տիրան Լճ Թաշճեան	
ԴԱՒԻԴԵԺ —	Մեծ. Տօք. Փաշտեան	

Հասցէ

Մ. Մամուրեան
Խմբ. Տէօրհն Ա. Մ՚ուլ ի ՋՄԻՒՌՆԻԱ.

M. Mamourian
Rédacteur de la Revue
« Arévélian Mamoul » SMYRNE

Hon. Rédaction